Չի գործում 2017թվականի ապրիլի 1-ից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
26/11/2010թ թիվ 26-Լ որոշմամբ

Փոփոխված է 25/01/2011թ թիվ 2-Լ որոշմամբ
22/07/2011թ թիվ 62-Լ որոշմամբ
01/12/2011թ թիվ 77-Լ որոշմամբ
20/12/2012թ թիվ 17-Լ որոշմամբ
13/12/2013թ թիվ 41-Լ որոշմամբ
10/04/2014թ թիվ 12-Լ որոշմամբ
16/12/2014թ թիվ 39-Լ որոշմամբ
23/06/2015թ թիվ 68-Լ որոշմամբ
21/07/2015թ թիվ 77-Լ որոշմամբ
31/08/2015թ թիվ 80-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

_____ Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
(վերջին փոփոխությունը գրանցված է)
ՀՀ կենտրոնական բանկում

«07» հոկտեմբերի 2015թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-013

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԳՈՒՅՔԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԻ, ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԻՑ ԶՐԿՄԱՆ ԿԱՐԳԻ ՈՒ ՀԻՄՔԵՐԻ)

ԵՐԵՎԱՆ - 2015

ԲԱԺԻՆ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են՝

1) ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի հետևանքով գույքին պատճառված վնասների գնահատում (ներառյալ՝լրացուցիչ և կրկնակի փորձաքննություն) իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձ փորձագետների որակավորման և որակավորումից զրկման կարգը, հիմքերը և պայմանները,

2) փորձագետների հետ կնքվող աշխատանքային և պատվիրակման պայմանագրերին ներկայացվող պահանջները, ինչպես նաև այդ պայմանագրերի՝ Բյուրոյում գրանցման կարգն ու պայմանները,

3) վերանորոգող կազմակերպություններին, դրանց և ապահովագրական ընկերություն-ների (Բյուրոյի) միջև կնքվող պայմանագրերին ներկայացվող պահանջները, վերանորոգող կազմակերպությունների հետ կնքվող պայմանագրերի գրանցման գործընթացը,

4) գույքային վնասների գնահատման (ներառյալ՝ լրացուցիչ և կրկնակի փորձաքննության) կարգն ու մեթոդաբանությունը,

5) փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների կողմից տրված եզրակացություններին (հաշվետվություններին) ներկայացվող պահանջները:

ԳԼՈՒԽ 2

ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն կանոններում օգտագործվող հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստով՝

1) **ապահովագրական ընկերություն**՝ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության անդամ ապահովագրական ընկերություն,

2) **Բյուրո**՝ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ,

3) **Խորհուրդ՝** Բյուրոյի խորհուրդ,

4) **Գործադիր տնօրեն՝** Բյուրոյի գործադիր տնօրեն,

5) **գույքային վնաս՝** ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի հետևանքով տուժողի գույքին պատճառված վնաս,

6) **Որակավորման հանձնաժողով՝** Բյուրոյի խորհրդին կից ստեղծված խորհրդակցական բնույթի որոշումներ կայացնող հանձնաժողով, որի որոշման հիման վրա Բյուրոյի խորհուրդը սույն կանոններով սահմանված կարգով որակավորում է փորձագետներին,

7) **Կոմիտե՝** վերանորոգող կազմակերպությունների նկատմամբ սահմանված պահանջ-ների՝ այդ թվում տեխնիկական հագեցվածության պահանջների, ինչպես նաև վերանորոգող կազմակերպությունների և փորձագետների հետ կնքված պայմանագրերի համապատասխանությունը ստուգող Բյուրոյում գործող մարմին, որի եզրակացության

հիման վրա Բյուրոյի գործադիր տնօրենը գրանցում է վերանորոգող կազմակերպությունների (փորձագետների) հետ կնքված պայմանագրերը,

8) **փորձագետ՝**

ա. ԱՊՊԱ ոլորտում գույքային վնասների գնահատում իրականացնելու համար սույն կանոններով սահմանված կարգով Բյուրոյի կողմից որակավորված իրավաբանական անձ (այսուհետ նաև՝ փորձագիտական կազմակերպություն), որն ապահովագրական ընկերության հետ կնքված պատվիրակման պայմանագրի հիման վրա կարող է իրականացնել իր որակավորմամբ թույլատրված գույքային վնասների գնահատում, կամ,

բ. ԱՊՊԱ ոլորտում գույքային վնասների գնահատում իրականացնելու համար սույն կանոններով սահմանված կարգով Բյուրոյի կողմից որակավորված ֆիզիկական անձ (այսուհետ նաև՝ ֆիզիկական անձ փորձագետ), ով ապահովագրական ընկերության հետ կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա կարող է իրականացնել իր որակավորմամբ թույլատրված գույքային վնասների գնահատում,

8.1) **վնասված գույքի փորձաքննության համար նախնական զննություն**՝ ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական ընկերությունների կողմից ապահովագրական հատուցումների վճարման, ինչպես նաև Բյուրոյի կողմից Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցումների վճարման հետ կապված հարաբերությունները կարգավորող կանոններով նախատեսված դեպքերում տուժողի պահանջով՝ ԱՊՊԱ պատահարի հետևանքով վնասված գույքի զննության ակտ կազմելու նպատակով նշանակված զննություն,

8.2) **գործարանային արտադրության դետալ կամ հանգույց՝** տվյալ ավտոտրանսպորտային միջոցի արտադրության ընթացքում տեղադրվող դետալ կամ հանգույց կամ արտադրող կազմակերպության կողմից առաջարկվող համապատասխան դետալ կամ հանգույց,

9) **վերանորոգող կազմակերպություն՝** ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարների հետևանքով առաջացած գույքային վնասների վերականգնում իրականացնող անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ,

10) **նշանակալից մասնակից՝** «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն նշանակալից մասնակցություն ունեցող անձ: ***(2-րդ կետի 8.1-րդ ենթակետը լրաց. է 31/08/2015թ թիվ 80-L)***

3. Սույն կանոններում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ 2

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ԳԼՈՒԽ 3

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

4. Բյուրոն իր ինտերնետային կայքի «Փորձագետներ» բաժնում հրապարակում է փորձագետներին և իր կողմից գրանցված պայմանագրի կողմ վերանորոգող կազմակերպություններին:

5. Ապահովագրական ընկերությունները պետք է ԱՊՊԱ ոլորտում վնասի գնահատում պատվիրելու (հանձնարարելու) համար համապատասխան փորձագետների, իսկ տուժողի ավտոտրանսպորտային միջոցին պատճառված վնասի վերանորոգման համար՝ իրենց ցուցակում ընդգրկված վերանորոգող կազմակերպությունների հետ ունենան սույն կանոնների համաձայն Բյուրոյի կողմից գրանցված պայմանագրեր:

6. Ապահովագրական ընկերությունն իրավունք չունի ԱՊՊԱ ոլորտում գույքային վնասի գնահատում պատվիրել (հանձնարարել) սույն կանոնների համաձայն համապատասխան որակավորում չստացած անձի կամ այնպիսի որակավորված անձի, որի հետ չունի սույն կանոնների համաձայն գրանցված պայմանագիր: Ապահովագրական ընկերությունն իրավունք չունի ԱՊՊԱ ոլորտում ավտոտրանսպորտային միջոցի վերանորոգում պատվիրել այնպիսի վերանորոգող կազմակերպության, որի հետ չունի սույն կանոնների համաձայն գրանցված պայմանագիր: Ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) իրավունք չունի վնասված գույքի փորձաքննության համար նախնական զննություն (այդ թվում՝ համատեղ զննության անցկացման դեպքում) պատվիրել (հանձնարարել) սույն կանոնների համաձայն համապատասխան որակավորում չունեցող անձի կամ այնպիսի որակավորված անձի, որի հետ չունի սույն կանոնների համաձայն գրանցված պայմանագիր: ***(6-րդ կետը լրաց. է 31/08/2015թ թիվ 80-Լ)***

7. Փորձագետների որակավորման և գրանցման փուլը ենթադրում է Հանձնաժողովի (Խորհրդի) կողմից սույն կանոններով համապատասխան փորձագետի համար սահմանված որակավորման պահանջների համապատասխանության ստուգում՝ Խորհրդի կողմից որակավորում և Կոմիտեի կողմից՝ ապահովագրական ընկերության հետ կնքված պայմանագրի պահանջների համապատասխանության ստուգում՝ Գործադիր տնօրենի կողմից պայմանագրի գրանցում: Բյուրոյի կողմից փորձագետների որակավորման փաստը հավաստվում է իր ինտերնետային կայքում վերջիններիս մասին տեղեկատվության հրապարակմամբ: Որակավորված անձի գրավոր պահանջով՝ վերջինիս տրամադրվում է որակավորման փաստը հավաստող տեղեկանք՝ ստորագրված Գործադիր տնօրենի կողմից և հաստատված Բյուրոյի կնիքով: Խորհրդի կողմից արդեն որակավորված փորձագետները, որոնց անվանումները հրապարակված են Բյուրոյի ինտերնետային կայքում, այլ ապահովագրական ընկերությունների հետ պայմանագրեր կնքելու դեպքում անցնում են միայն նրանց հետ կնքված պայմանագրի գրանցման փուլ: Բյուրոյի ինտերնետային կայքում հրապարակված փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների վերաբերյալ տվյալների թարմացումները կատարվում են Բյուրոյի կողմից համապատասխան տեղեկատվությունը ստացվելուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում:

8. Ավտոտրանսպորտային միջոցներ վերանորոգող կազմակերպությունները Կոմիտեում անցնում են սույն կանոններով նախատեսված դեպքերում վերջիններիս համար սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջների համապատասխանության ստուգում և ապահովագրական ընկերության հետ կնքված պայմանագրի

պահանջների համապատասխանության ստուգում՝ Գործադիր տնօրենի կողմից պայմանագրի գրանցում:

9. Կոմիտեի կողմից տեխնիկական պահանջների ստուգում անցած վերանորոգող կազմակերպությունները, որոնց անվանումները հրապարակված են Բյուրոյի ինտերնետային կայքում, այլ ապահովագրական ընկերությունների հետ ԱՊՊԱ ոլորտում տեղի ունեցած ապահովագրական պատահարի հետևանքով վնասված ավտոտրանսպորտային միջոցների վերանորոգման պայմանագրեր կնքելու դեպքում անցնում են միայն պայմանագրի գրանցման փուլ:

10. Բյուրոն իր կանոնադրությամբ նախատեսված վերահսկողական միջոցառումների, ինչպես նաև սույն կանոններով նախատեսված ստուգիչ փորձաքննությունների միջոցով մշտապես վերահսկում է փորձագետների, ինչպես նաև այն վերանորոգող կազմակերպությունների կողմից Օրենքով և Բյուրոյի կանոններով սահմանված պահանջների պահպանումը, որոնց հետ կնքված պայմանագրերը գրանցվել են սույն կանոնների համաձայն:

11. Խորհուրդն իրավունք ունի նախազգուշացնել փորձագետին (ինչի մասին Բյուրոն հրապարակում է իր ինտերնետային կայքում), եթե՝

1) ստուգիչ փորձաքննության արդյունքներով, գնահատողի կողմից տվյալ փորձաքննությամբ ստացված վնասի մեծությունը փոփոխվել է ավելի քան 20 տոկոսով՝ բայց ոչ պակաս 40.000 Հայաստանի Հանրապետության դրամից, կամ առնվազն 200.000 Հայաստանի Հանրապետության դրամով (բացառությամբ այն դեպքերի, երբ նման շեղման արդյունքում ապահովագրական ընկերության կողմից տուժողին հատուցվող կամ հատուցված գումարի չափը փոփոխություններ չի կրում), և այն բողոքարկված չէ կամ բողոքարկման բոլոր փուլերի ավարտից հետո գնահատված վնասի մեծության փոփոխությունը չի գերազանցել սույն ենթակետով սահմանված չափը: Որպես սույն ենթակետով նախատեսված փորձագետի նախազգուշացման հիմք հաշվի չեն առնվում այն փորձաքննությունների արդյունքում ստացված վնասի մեծությունների փոփոխության դեպքերը, որոնք իրականացվել են սույն կանոնների 21.2-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան,

2) նրա կողմից խախտվել են իր հետ կնքված պայմանագրի՝ սույն կանոնների համապատասխանաբար 26-րդ կետի 5)-րդ, 6)-րդ, 9)-րդ, 10)-14)-րդ ենթակետերով կամ 48-րդ կետի 2)-րդ, 4)-րդ, 7)-10)-րդ ենթակետերով նախատեսված պահանջները:

11.1. Խորհուրդն իրավունք ունի զրկել փորձագետին որակավորումից (ինչի մասին Բյուրոն հրապարակում է իր ինտերնետային կայքում), եթե՝

1) պարզվում է, որ վերջինս որակավորման կամ գրանցման փուլում ներկայացրել է կեղծ տեղեկություններ կամ փաստաթղթեր,

2) սույն կանոնների 11.2-րդ կետի 1)-ին ենթակետով սահմանված հիմքով փորձագետի որակավորման գործողությունը կասեցնելու ժամկետի ավարտից հետո չեն վերացել կասեցման հիմքերը,

3) Խորհրդի (Որակավորման հանձնաժողովի) հիմնավոր կարծիքով ԱՊՊԱ ոլորտում տվյալ փորձագետի կողմից գույքային վնասների գնահատումը կարող է նպաստել զեղծարարությունների մեծացմանը, ինչպես նաև վտանգել ԱՊՊԱ ոլորտի վնասների փորձաքննությունների գործընթացի անաչառությունը,

4) վերջին 1 տարվա ընթացքում փորձագետի նկատմամբ երկրորդ անգամ է կիրառվում նախազգուշացում կամ Խորհրդի (Որակավորման հանձնաժողովի) կարծիքով սույն կանոնների 11-րդ կետով նախատեսված՝ փորձագետի կողմից թույլ տրված խախտման համար նախազգուշացման կիրառումը չի համապատասխանում խախտման ծանրությանը կամ չի կարող ապահովել փորձագետի կողմից հետագայում նմանատիպ խախտումների կատարման բացառումը:

11.2. Խորհուրդն իրավունք ունի կասեցնել փորձագետի որակավորման գործողությունը (ինչի մասին Բյուրոն հրապարակում է իր ինտերնետային կայքում), եթե՝

1) պարզվում է, որ նա չի բավարարում սույն կանոններով փորձագետի համար սահմանված պահանջներին,

2) Խորհրդի (Որակավորման հանձնաժողովի) կարծիքով ԱՊՊԱ ոլորտում տվյալ փորձագետի կողմից գույքային վնասների գնահատումը կարող է նպաստել զեղծարարությունների մեծացմանը, ինչպես նաև վտանգել ԱՊՊԱ ոլորտի վնասների փորձաքննությունների գործընթացի անաչառությունը,

3) փորձագետը սույն կանոնների 11-րդ կետի 1)-ին ենթակետով նախատեսված դեպքերում բողոքարկել է ստուգիչ փորձաքննության արդյունքները:

11.3. Փորձագետի որակավորումը կարող է կասեցվել որոշակի ժամկետով կամ մինչև կասեցման համար հիմք հանդիսացող հանգամանքների վերացումը, բայց բոլոր դեպքերում՝ ոչ ավելի, քան 6 ամիսը: Կասեցման ժամանակահատվածում համապատասխան անձը համարվում է որակավորում չունեցող և նրան չի կարող հանձնարարվել ԱՊՊԱ ոլորտում գույքային վնասների որևէ փորձաքննություն:

11.4. Սույն կանոնների 11-րդ կետով նախատեսված դեպքերում համապատասխան պատասխանատվության միջոցը (նախազգուշացում, որակավորումից զրկում կամ որակավորման գործողության կասեցում) կարող է կիրառվել ինչպես փորձագիտական կազմակերպության, այնպես էլ այն փորձագետի (փորձագետների) վրա, ով (ովքեր) անմիջականորեն կազմել է (են) փորձագիտական եզրակացությունը (հաշվետվությունը), ինչպես նաև միաժամանակ երկուսի նկատմամբ: Ընդ որում, ելնելով կոնկրետ հանգամանքներից՝ փորձագիտական կազմակերպության և նրա կազմում գործող ֆիզիկական անձ փորձագետների նկատմամբ կարող են կիրառվել տարբեր պատասխանատվության միջոցներ:

11.5. Խորհուրդն ուժը կորցրած է ճանաչում փորձագետի որակավորումը, եթե՝

1) փորձագետը ներկայացրել է համապատասխան գրավոր դիմում,

2) ֆիզիկական անձ փորձագետը մահացել է,

3) իրավաբանական անձ փորձագետը լուծարվել է կամ անվճարունակ (սնանկ) է ճանաչվել կամ վերակազմակերպվել է, բացառությամբ վերակազմավորման դեպքի, ինչպես նաև միացման դեպքում պահպանվող կազմակերպության և առանձնացման դեպքում՝ այն կազմակերպության, որից առանձնացվել են: ***(11.5-րդ կետի 1-ին ենթակետը փոփոխվել է 23/06/2015թ թիվ 68-Լ որոշմամբ)***

12. Գործադիր տնօրենն իրավունք ունի Կոմիտեի որոշման հիման վրա վերանորոգող կազմակերպության և ապահովագրական ընկերության միջև կնքված բոլոր պայմանագրերը հանել գրանցումից (ինչի մասին Բյուրոն հրապարակում է իր ինտերնետային կայքում), եթե՝

1) վերջին մեկ տարվա ընթացքում առնվազն երկու անգամ վերանորոգող կազմակերպության հետ համագործակցող ապահովագրական ընկերության առաջարկությամբ կամ Բյուրոյի նախաձեռնությամբ իրականացված Բյուրոյի ստուգիչ փորձաքննության արդյունքներով վերանորոգողի կողմից յուրաքանչյուր վնասի գծով հաշվարկված վնասի մեծությունը փոփոխվել է ավելի քան 20 տոկոսով՝ բայց ոչ պակաս 40.000 Հայաստանի Հանրապետության դրամից, կամ առնվազն 200.000 Հայաստանի Հանրապետության դրամով (բացառությամբ այն դեպքերի, երբ նման շեղման արդյունքում ապահովագրական ընկերության կողմից տուժողին հատուցվող կամ հատուցված գումարի չափը փոփոխություններ չի կրում) կամ Բյուրոյի կողմից պարզվել է, որ վերանորոգող կազմակերպության կատարած ծախսերը մեկ ավտոտրանսպորտային միջոցի վերականգնման համար ուռճացված են եղել ավելի քան 20 տոկոսով՝ բայց ոչ պակաս 40.000 Հայաստանի Հանրապետության դրամից, կամ առնվազն 200.000 Հայաստանի Հանրապետության դրամով,

2) վերջին մեկ տարվա ընթացքում առնվազն երկու անգամ խախտել է Բյուրոյի կողմից սույն կանոններով վերանորոգող կազմակերպության համար սահմանված ցանկացած պահանջի կատարում,

3) Կոմիտեի կարծիքով ԱՊՊԱ ոլորտում տվյալ վերանորոգող կազմակերպության կողմից գործունեության ծավալումը կարող է նպաստել զեղծարարությունների մեծացմանը, ինչպես նաև վտանգել ԱՊՊԱ ոլորտի վնասների փորձաքննությունների և վնասների վերականգնման գործընթացների անաչառությունը,

4) սույն կանոններով նախատեսված այլ դեպքերում:

13. Ապահովագրական ընկերության աշխատակից փորձագետը չի կարող միաժամանակ լինել տվյալ ապահովագրական ընկերության՝ ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարների առաջացման պատճառների փորձաքննություն իրականացնող փորձագետ:

14. ԱՊՊԱ ոլորտում միևնույն պատահարի գծով փորձագիտական կազմակերպության՝ ԱՊՊԱ գծով վնասի փորձաքննություն իրականացնող աշխատակիցը չի կարող միաժամանակ իրականացնել տվյալ պատահարի պատճառների փորձաքննություն: Այն դեպքում, երբ փորձագիտական կազմակերպությանը ապահովագրական ընկերության կողմից պատվիրակված է և՛ վնասների գնահատումը և՛ պատճառների փորձաքննությունը, ապա միևնույն ապահովագրական պատահարի դեպքում դրանք պետք է իրականացվեն փորձագիտական կազմակերպության տարբեր աշխատակիցների կողմից:

15. Փորձագետները սույն կանոնների համաձայն ստանում են հետևյալ որակավորումներից մեկը կամ միաժամանակ երկուսը՝

1) ԱՊՊԱ ոլորտում անշարժ գույքին պատճառված վնասներ գնահատող փորձագետի,

2) ԱՊՊԱ ոլորտում անշարժ գույքից բացի ցանկացած այլ գույքին պատճառված վնասներ գնահատող փորձագետի:

16. Համաձայնեցված հայտարարագրով հատուցման գործընթացի դեպքում գույքին պատճառված վնասների գնահատումն ԱՊՊԱ ոլորտում իրականացնում է ֆիզիկական անձ փորձագետը, որի հետ ապահովագրական ընկերության կնքած աշխատանքային պայմանագիրը գրանցված է Գործադիր տնօրենի կողմից:

17. Լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունը, ինչպես նաև Բյուրոյի նախաձեռնությամբ իրականացվող ստուգիչ փորձաքննությունն իրականացվում է սույն կանոններում արտացոլված սկզբունքների և պահանջների պահպանմամբ:

18. Միևնույն ապահովագրական պատահարի հետ կապված կրկնակի կամ Բյուրոյի կողմից իրականացվող ստուգիչ փորձաքննությունը չի կարող պատվիրվել (հանձնարարվել) տվյալ ապահովագրական պատահարի հետ կապված առաջնային և (կամ) լրացուցիչ փորձաքննություն կամ վնասված գույքի փորձաքննության համար նախնական զննություն իրականացրած փորձագետին (փորձագետներին): ***(18-րդ կետը լրաց. է 31/08/2015թ թիվ 80-L)***

19. Ապահովագրական ընկերությունները պետք է ունենան սույն կանոններում սահմանված պահանջներին համապատասխանող և պայմանագրի գրանցման փուլ անցած՝

1) սույն կանոնների 69-րդ կետում նշված յուրաքանչյուր ուղղությունը ծածկող ավտոտրանսպորտային միջոցներ վերանորոգող առնվազն չորս կազմակերպության հետ կնքված պայմանագրեր, որոնցից առնվազն երկուսի գործունեության հասցեն կամ գործունեության հասցեներից մեկը Երևան քաղաքի տարածքում է,

2) անշարժ գույքից բացի ցանկացած այլ գույքին պատճառված վնասների գնահատում իրականացնող առնվազն երեք փորձագետի հետ կնքված պայմանագրեր (որոնցից առնվազն մեկը պետք է լինի ֆիզիկական անձ որակավորված փորձագետ)՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում անշարժ գույքից բացի ցանկացած այլ գույքին պատճառված վնասների գնահատման հնարավորությունը,

3) անշարժ գույքին պատճառված վնասի գնահատում իրականացնող առնվազն մեկ փորձագետի հետ կնքված պայմանագիր՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում անշարժ գույքին պատճառված վնասների գնահատման հնարավորությունը:

ԲԱԺԻՆ 3

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ԳԼՈՒԽ 4.

ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

20. Գույքային վնասների գնահատումն իրականացնում է փորձագետը՝ սույն կանոններով Բյուրոյի որակավորմամբ իրեն թույլատրված գործունեության շրջանակներում:

21. Փորձագետը գույքային վնասների գնահատումն իրականացնում է առանձին գրավոր եզրակացություն (հաշվետվություն) կազմելու կամ վերանորոգող կազմակերպության կողմից տրված հաշվետվության վրա իր համաձայնությունն արտահայտող նշում կատարելու միջոցով (համաձայնության վերաբերյալ նշումը կատարվում է փորձագետի (փորձագիտական կազմակերպության իրավասու մարմնի կամ նրա լիազորած անձի) անվան, ազգանվան և ստորագրության (փորձագիտական կազմակերպության դեպքում՝ նաև վերջինի անվանման և կնիքի (առկայության դեպքում)) արտացոլմամբ, ինչը նշանակում է որ փորձագետը համաձայն է գնահատված վնասի

չափին): Ընդ որում, փորձագետը կարող է սույն կետով նախատեսված համաձայնության վերաբերյալ նշագրումը կատարել միայն վերանորոգող կազմակերպության այնպիսի հաշվետվության վրա, որը համապատասխանում է սույն կանոնների 7-րդ գլխով փորձագիտական կազմակերպության կողմից գույքային վնասների գնահատման հաշվետվությանը (եզրակացությանը) ներկայացվող պահանջներին:

21.1. Փորձագետը (Փորձագետները) վնասված գույքի փորձաքննության համար նախնական զննությունն իրականացնում է (են) Ձև 9-ով սահմանված ձևի զննության ակտ կազմելու միջոցով: Զննության ակտի անբաժանելի մաս են համարվում վնասված գույքի ընդհանուր համակողմանի գունավոր ֆոտոլուսանկարները, ինչպես նաև զննության ակտում որպես վնասված նշված բոլոր դետալների կամ հանգույցների ֆոտոլուսանկարները, որոնք հնարավոր է լուսանկարել: Ֆոտոլուսանկարները պետք է ներկայացված լինեն գունավոր և բավարար չափով տեսանելի մեծությամբ: ***(21.1-րդ կետը լրաց. է 31/08/2015թ թիվ 80-L)***

21.2. Տվյալ ապահովագրական պատահարի գծով ապահովագրական ընկերության (Բյուրոյի) կողմից վնասված գույքի փորձաքննության համար նախնական զննություն նշանակված լինելու դեպքում առաջնային փորձաքննություն իրականացնող փորձագետը համապատասխան գույքին պատճառված վնասի գնահատման ժամանակ հիմնվում է բացառապես վնասված գույքի փորձաքննության համար նախնական զննության արդյունքում կազմված և Բյուրոյի կանոնների համաձայն բոլոր շահագրգիռ անձանց կողմից ստորագրված զննության ակտի վրա: Ընդ որում այս դեպքում առաջնային փորձաքննություն իրականացնող փորձագետը վնասված և փոխարինման ենթակա հանգույցների կամ դետալների գները որոշելիս և կատարման ենթակա վերանորոգման աշխատանքների գները սույն կանոնների համաձայն հաշվարկելիս հիմք է ընդունում տվյալ գույքի վերանորոգման, իսկ համապատասխան փաստաթղթեր չներկայացվելու դեպքում՝ զննության ակտը կազմելու օրվա դրությամբ առկա համապատասխան գները: ***(21.2-րդ կետը լրաց. է 31/08/2015թ թիվ 80-L)***

21.3. Վնասված գույքի փորձաքննության համար նախնական զննություն չիրականացվելու դեպքում փորձագետի կողմից նախքան փորձագիտական եզրակացության կազմումը վնասված գույքի փաստացի գտնվելու վայրում իրականացվում է դրա փորձաքննության համար զննություն: Համաձայնեցված հայտարարագրով հատուցման գործընթացի դեպքում սույն կետով նախատեսված զննությունը վնասված գույքի փաստացի գտնվելու վայրում իրականացվելու փոխարեն կարող է իրականացվել վնասված գույքի փաստացի գտնվելու վայրում այլ անձի կողմից փորձաքննության համար կատարված լուսանկարների միջոցով: Ընդ որում Բյուրոյի կողմից պատվիրված փորձաքննությունների գծով վնասված գույքի փորձաքննության համար զննությունն իրականացնելիս կազմվում է վնասված դետալների և (կամ) հանգույցների ցանկը (համաձայն Ձև 10-ի)՝ ներկայացնելով համապատասխան տուժողի կամ նրա ներկայացուցչի, ինչպես նաև, ներկայության դեպքում, վնաս պատճառողի (վնաս պատճառողի ներկայացուցչի) ստորագրմանը: ***(21.3-րդ կետը լրաց. է 31/08/2015թ թիվ 80-L)***

22. ԱՊՊԱ ոլորտում փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների կողմից ավտոտրանսպորտային միջոցին պատճառված գույքային վնասների գնահատման և վնասի վերականգնման գործընթացի նկատմամբ նվազագույն պահանջներն են՝

1) Եթե տեխնիկապես հնարավոր է (դետալի վերականգնումը հնարավոր է դրա նպատակային նշանակությունը և արտաքին տեսքը պահպանելով) և տնտեսապես հիմնավորված (վերանորոգման ծախսերը չեն գերազանցում տվյալ դետալի կամ հանգույցի շուկայական արժեքի 80 տոկոսը) ապահովագրական պատահարի արդյունքում վնասված ավտոտրանսպորտային միջոցի որևէ դետալ կամ հանգույց վերականգնել, ապա պատճառված վնասի չափի մեջ փորձագետը հաշվարկում է այդ դետալի կամ հանգույցի վերանորոգման ծախսերը, իսկ տուժողի կողմից ապահովագրական հատուցման վերանորոգման տարբերակը ընտրելու դեպքում՝ վերանորոգող կազմակերպության կողմից այն վերանորոգվում է: Եթե տեխնիկապես հնարավոր չէ (դետալի վերականգնումը հնարավոր չէ դրա նպատակային նշանակությունը կամ արտաքին տեսքը պահպանելով) կամ տնտեսապես հիմնավորված չէ (վերանորոգման ծախսերը գերազանցում են տվյալ դետալի կամ հանգույցի շուկայական արժեքի 80 տոկոսը) ապահովագրական պատահարի արդյունքում վնասված ավտոտրանսպորտային միջոցի որևէ դետալ կամ հանգույց վերականգնել, ապա պատճառված վնասի չափի մեջ հաշվարկվում է համանման նոր կամ օգտագործված դետալի, ագրեգատի կամ հանգույցի ձեռքբերման և տեղադրման արժեքը, իսկ տուժողի կողմից ապահովագրական հատուցման վերանորոգման տարբերակը ընտրելու դեպքում՝ վերանորոգող կազմակերպության կողմից ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրվում է համանման նոր կամ օգտագործված դետալ, ընդ որում՝

ա. մինչև 60.000 կիլոմետր վազք ունեցող՝ մինչև երեք (ներառյալ) տարվա բացառապես ԱՊՀ երկրներում արտադրված ավտոտրանսպորտային միջոցների և մինչև 120.000 կիլոմետր վազք ունեցող՝ մինչև վեց տարվա արտադրության ԱՊՀ երկրներից բացի այլ երկրներում արտադրված ավտոտրանսպորտային միջոցների համար վնասված և փոխարինման ենթակա հանգույցները կամ դետալները փոխարինվում են գործարանային արտադրության նոր հանգույցներով կամ դետալներով, իսկ փորձագետի կողմից կատարված գույքային վնասի հաշվարկման հիմքում արտացոլվում են դրանց արժեքները՝ առանց որևէ մաշվածություն մասհանելու,

բ. երեքից ավելի տարվա կամ 60.000 կիլոմետրից ավելի վազք ունեցող, բացառապես ԱՊՀ երկրներում կամ նախկին Խորհրդային Միության երկրներում արտադրված ավտոտրանսպորտային միջոցներին պատճառված վնասի գնահատման հիմքում դրվում են գործարանային արտադրության նոր դետալների կամ հանգույցների արժեքները՝ մասհանելով ձև 3-ով սահմանված մաշվածության տոկոսները, դրանց բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետությունում ձևավորված օգտագործված պահեստամասերի շուկայում առկա հնարավորին նույն տարիքի և համանման օգտագործված գործարանային արտադրության դետալների կամ հանգույցների արժեքները, իսկ նախորդ երկուսի բացակայության դեպքում նոր ոչ գործարանային արտադրության դետալների կամ հանգույցների արժեքները: Համապատասխանաբար վերանորոգող կազմակերպությունը վնասված և փոխարինման ենթակա դետալը կամ հանգույցը փոխարինում է գործարանային արտադրության նոր դետալով կամ հանգույցով, դրա բացակայության կամ տուժողի կողմից մաշվածության տոկոսներին համամասնորեն լրավճարելուց հրաժարվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում ձևավորված օգտագործված պահեստամասերի շուկայում առկա

հնարավորին նույն տարիքի և համանման օգտագործված գործարանային արտադրության դետալով կամ հանգույցով, իսկ նախորդ երկուսի բացակայության դեպքում՝ համանման ոչ գործարանային արտադրության նոր դետալով կամ հանգույցով:

գ. վեցից ավելի տարվա կամ 120.000 կիլոմետրից ավելի վազք ունեցող ԱՊՀ կամ նախկին Խորհրդային Միության երկրներից բացի այլ երկրներում արտադրված ավտոտրանսպորտային միջոցներին պատճառված վնասի գնահատման հիմքում դրվում են Հայաստանի Հանրապետությունում ձևավորված օգտագործված պահեստամասերի շուկայում առկա հնարավորին նույն տարիքի և համանման օգտագործված գործարանային արտադրության հանգույցի կամ դետալի արժեքները, իսկ դրանց բացակայության դեպքում գործարանային արտադրության նոր դետալների կամ հանգույցների արժեքները՝ մասհանելով ձև 2-ով սահմանված մաշվածության տոկոսները, իսկ նախորդ երկուսի բացակայության դեպքում՝ ոչ գործարանային արտադրության նոր դետալների կամ հանգույցների արժեքները: Համապատասխանաբար վերանորոգող կազմակերպությունը վնասված և փոխարինման ենթակա դետալները կամ հանգույցները փոխարինում է Հայաստանի Հանրապետությունում ձևավորված օգտագործված պահեստամասերի շուկայում առկա հնարավորին նույն տարիքի և համանման օգտագործված գործարանային արտադրության հանգույցով կամ դետալով, դրանց բացակայության դեպքում գործարանային արտադրության նոր դետալով կամ հանգույցով, իսկ նախորդ երկուսի բացակայության կամ տուժողի կողմից նոր դետալի կամ հանգույցի արժեքների համար մաշվածության տոկոսներին համամասնորեն լրավճարելուց հրաժարվելու դեպքում՝ ոչ գործարանային արտադրության նոր դետալով կամ հանգույցով:

դ. եթե սույն ենթակետով նախատեսված ցանկացած դեպքում ապացուցվում է, որ վնասված և փոխարինման ենթակա հանգույցը կամ դետալը եղել է համապատասխան ավտոտրանսպորտային միջոցից տարբերող հնության (ավելի նոր կամ ավելի հին), ապա վնասի գնահատման (վերանորոգման) համար կիրառվում են տվյալ հանգույցի կամ դետալի տարիքին համարժեք տարիքի ավտոտրանսպորտային միջոցների հանգույցների և դետալների գնահատման (վերանորոգման) համար սույն ենթակետի «ա»-ից «գ» պարբերություններով սահմանված կանոնները:

ե. եթե սույն ենթակետով նախատեսված ցանկացած դեպքում փորձագետը ապացուցում է, որ վնասված և փոխարինման ենթակա հանգույցը կամ դետալը եղել է ոչ գործարանային արտադրության, ապա վնասի գնահատման հիմքում դրվում են ոչ գործարանային արտադրության նույն հանգույցի կամ դետալի արժեքները՝ առանց որևէ մաշվածություն մասհանելու: Սույն պարբերությամբ նախատեսված դեպքում (երբ վնասված և փոխարինման ենթակա հանգույցների կամ դետալների ոչ գործարանային արտադրության լինելն ապացուցվում է վերանորոգող կազմակերպության կողմից) վերանորոգող կազմակերպությունը համապատասխան հանգույցը կամ դետալը փոխարինում է ոչ գործարանային հանգույցներով կամ դետալներով:

2) այն դեպքում, երբ ավտոտրանսպորտային միջոցին պատճառված վնասի ընդհանուր չափը գերազանցում է մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը տվյալ ավտոտրանսպորտային միջոցի շուկայական արժեքի 80 տոկոսը, ապա գնահատումն իրականացվում է Բյուրոյի խորհրդի հաստատած գնահատման՝ մնացոր-

դային արժեքի մեթոդով՝ ավտոտրանսպորտային միջոցի՝ մինչև ապահովագրական պատահարը շուկայական արժեքից մասհանելով ապահովագրական պատահարից հետո ավտոտրանսպորտային միջոցի մնացորդային արժեքի չափը:

3) փորձագետի կողմից վնասի չափի հաշվարկում ավտոտրանսպորտային միջոցի վերանորոգման հետ կապված աշխատանքների արժեքը պետք է համապատասխանի տվյալ շուկայում ձևավորված համանման վերանորոգման աշխատանքների պատշաճ կատարման համար սովորաբար գանձվող գնին:

4) փորձագետի կամ վերանորոգող կազմակերպության կողմից հաշվարկվող վնասի չափի հաշվարկում ներառվող չնախատեսված կամ թաքնված այլ ծախսերը չեն կարող գերազանցել տվյալ ավտոտրանսպորտային միջոցին պատճառված ընդհանուր վնասի 5 տոկոսը:

5) սույն կետով սահմանված կարգով վնասի գնահատման բոլոր դեպքերում կիրառվում է միջին թվաբանականի մեթոդը՝ որպես հիմք վերցնելով տվյալ միավորի համար առաջարկվող և փորձագետին հայտնի նվազագույն և առավելագույն գները:

6) եթե ավտոտրանսպորտային միջոցի վազքի ցուցիչի հիման վրա տեխնիկապես հնարավոր չէ (չգործելու, վնասված լինելու կամ այլ նմանատիպ պատճառով) վերծանել ավտոտրանսպորտային միջոցի վազքը, կամ ավտոտրանսպորտային միջոցի վազքի ցուցիչը պարունակում է հինգ կամ պակաս նիշ, ինչի պատճառով հնարավոր չէ ստույգ որոշել ավտոտրանսպորտային միջոցի իրական վազքը, ապա այլ ապացույցների բացակայության դեպքում սույն կետով նախատեսված կանոնների կիրառման նպատակով համարվում է, որ տվյալ ավտոտրանսպորտային միջոցի վազքը արտադրման ամսաթվից մինչև հաշվետվության (եզրակացության) կազմման օրը յուրաքանչյուր տարվա համար որպես տաքսի կամ երթուղային տաքսի շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից բացի բոլոր ավտոտրանսպորտային միջոցների համար կազմել է 20 հազար կիլոմետր, իսկ որպես տաքսի կամ երթուղային տաքսի շահագործվող տրանսպորտային միջոցների համար 40 հազար կիլոմետր (ոչ ամբողջական տարվա համար տարեկան վազքը նվազեցվում է չլրացած օրերի քանակին համամասնորեն):

7) որպես ավտոտրանսպորտային միջոցի տարիք ընդունվում է տվյալ փորձաքննության իրականացման, իսկ կրկնակի և ստուգիչ փորձաքննությունների, ինչպես նաև ամբողջությամբ վերանորոգված գույքի գծով առաջնային փորձաքննության դեպքում՝ համապատասխանաբար առաջնային փորձաքննության իրականացման և վերանորոգման տարեթվի և տվյալ ավտոտրանսպորտային միջոցի արտադրման տարեթվի տարբերությունը: ***(22-րդ կետը լրացվել է 23/06/2015թ թիվ 68-L, իսկ 22-րդ կետի 7-րդ ենթակետը լրաց. է 31/08/2015թ թիվ 80-L)***

23. ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի հետևանքով վնասված ավտոտրանսպորտային միջոցներից բացի այլ գույքային վնասների գնահատումը կամ դրանց վերանորոգումն իրականացվում է պահպանելով հետևյալ սկզբունքները՝

1) եթե տեխնիկապես հնարավոր է (դետալի վերականգնումը հնարավոր է դրա նպատակային նշանակությունը և արտաքին տեսքը պահպանելով) և տնտեսապես հիմնավորված (վերանորոգման ծախսերը չեն գերազանցում տվյալ գույքի շուկայական արժեքի 80 տոկոսը) ապահովագրական պատահարի արդյունքում վնասված գույքի ցանկացած դետալ կամ հանգույց վերականգնել, ապա պատճառված վնասի չափի մեջ

փորձագետը հաշվարկում է վնասի վերականգնման ծախսերը, իսկ տուժողի կողմից ապահովագրական հատուցման վերանորոգման տարբերակը ընտրելու դեպքում՝ վերանորոգող կազմակերպության կողմից այն վերանորոգվում է: Եթե տեխնիկապես հնարավոր չէ (դետալի վերականգնումը հնարավոր չէ դրա նպատակային նշանակությունը կամ արտաքին տեսքը պահպանելով) կամ տնտեսապես հիմնավորված չէ (վերանորոգման ծախսերը գերազանցում են տվյալ դետալի կամ հանգույցի շուկայական արժեքի 80 տոկոսը) ապահովագրական պատահարի արդյունքում վնասված գույքի որևէ դետալ կամ հանգույց վերականգնել, ապա պատճառված վնասի չափի մեջ հաշվարկվում է համանման նոր դետալի կամ հանգույցի արժեքը (վնասված դետալը կամ հանգույցը փոխարինվում է համանման դետալով կամ հանգույցով): Ընդ որում՝ վնասի չափի հաշվարկում ընդունվում են այնպիսի դետալ կամ մաս (վնասված դետալը կամ հանգույցը փոխարինվում է այնպիսի արտադրության և տեխնիկական տվյալներով օժտված դետալով կամ հանգույցով), որն առկա է եղել մինչ ապահովագրական պատահարը,

2) այն դեպքում, երբ գույքին պատճառված վնասի ընդհանուր չափը գերազանցում է մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը տվյալ գույքի շուկայական արժեքի 80 տոկոսը, ապա գնահատումը պետք է իրականացվի գնահատման՝ մնացորդային արժեքի մեթոդով՝ գույքի մինչ ապահովագրական պատահարը շուկայական արժեքից մասհանելով ապահովագրական պատահարից հետո գույքի մնացորդային արժեքի չափը,

3) գույքի մնացորդների արժեքի հաշվարկն իրականացնելիս փորձագետը պետք է առաջնորդվի Բյուրոյի խորհրդի կողմից հաստատված ապահովագրական պատահարից հետո գույքի մնացորդների արժեքի հաշվարկման մեթոդաբանությամբ,

4) փորձագետի կողմից վնասի չափի հաշվարկում գույքի վերանորոգման հետ կապված աշխատանքների արժեքը պետք է համապատասխանի տվյալ շուկայում ձևավորված նմանատիպ վերանորոգման աշխատանքների պատշաճ որակով իրականացման համար սովորաբար գանձվող գնին,

5) որպես ավտոտրանսպորտային միջոցից տարբերվող այլ գույք վերանորոգող կազմակերպություն կարող են հանդես գալ համանման գույք վերանորոգող մասնագիտացված կազմակերպությունները կամ համանման գույքի երաշխիքային սպասարկում իրականացնող անձինք: Այն դեպքում, երբ տուժողն ընտրում է ապահովագրական պատահարի արդյունքում վնասված ավտոտրանսպորտային միջոցից տարբերվող այլ գույքը վերանորոգելու տարբերակը, ապա ապահովագրական ընկերությունը պետք է երեք աշխատանքային օրվա ընթացքում տուժողին առաջարկի տվյալ գույքի վերանորոգում իրականացնող առնվազն երկու կազմակերպության անվանում, որոնք համապատասխանում են սույն ենթակետում նշված պահանջներին:

23.1. Փորձագետը սույն գլխով նախատեսված վնասի գնահատման հիմքում որպես դետալների կամ հանգույցների կամ դրանց վերանորոգման արժեք հիմք է ընդունում տվյալ փորձաքննության իրականացման, իսկ կրկնակի և ստուգիչ փորձաքննությունների, ինչպես նաև ամբողջությամբ վերանորոգված գույքի գծով առաջնային փորձաքննության դեպքում՝ համապատասխանաբար առաջնային փորձաքննության իրականացման և վերանորոգման օրվա դրությամբ համապատասխան դետալների կամ հանգույցների կամ

դրանց վերանորոգման արժեքները, բացառությամբ սույն կանոնների 21.2-րդ կետով նախատեսված դեպքերի: ***(23-րդ կետը լրացվել է 23/06/2015թ թիվ 68-L որոշմամբ)***

24. Եթե սույն կանոնների համաձայն՝ վնասված գույքի վերականգնումը պետք է իրականացվի ոչ գործարանային արտադրության կամ օգտագործված գործարանային արտադրության կամ վնասված կամ վերանորոգված դետալներով կամ հանգույցներով փոխարինման միջոցով, ապա համապատասխան վնասված դետալները կամ հանգույցները կարող են փոխարինվել գործարանային արտադրության նոր կամ առավել փոքր տարիքի կամ բարվոք վիճակում գտնվող դետալներով կամ հանգույցներով միայն վերանորոգման արժեքի և ապահովագրական հատուցման չափի տարբերությունը տուժողի և (կամ) այլ անձի կողմից վճարելու գրավոր համաձայնության առկայությամբ: ***(24-րդ կետը լրաց. է 31/08/2015թ թիվ 80-L)***

24.1. Ցանկացած դեպքում, եթե ապացուցված է, որ պատահարի արդյունքում վնասված գույքը կամ դրա առանձին հանգույցը կամ դետալը մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը արդեն իսկ վնասված է եղել, ապա փորձագետը սույն գլխի համաձայն հաշվարկված վերականգնման արժեքից նվազեցնում է նախքան պատահարն առկա վնասի՝ փորձաքննության իրականացման, իսկ կրկնակի և ստուգիչ փորձաքննությունների, ինչպես նաև ամբողջությամբ վերանորոգված գույքի գծով առաջնային փորձաքննության դեպքում՝ համապատասխանաբար առաջնային փորձաքննության իրականացման և վերանորոգման օրվա դրությամբ վերականգման արժեքը: Սույն կետով նախատեսված դեպքում վերանորոգող կազմակերպությունը վնասված և փոխարինման ենթակա դետալը կամ հանգույցը փոխարինում է մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը առկա վնասվածության աստիճանով համանման դետալով կամ հանգույցով: ***(24.1-րդ կետը լրաց. է 23/06/2015թ թիվ 68-L և 31/08/2015թ թիվ 80-L)***

24.2. Սույն կանոնների 22-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ կամ 23-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքերում, եթե ապացուցվում է, որ պատահարի արդյունքում վնասված հանգույցը կամ դետալը մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը արդեն վերանորոգված է եղել, ապա փորձագետը վնասի գնահատման հաշվարկման համար հիմք է ընդունում տվյալ համանման վերանորոգված գործարանային արտադրության հանգույցի կամ դետալի շուկայական արժեքը, իսկ դրանց բացակայության դեպքում գործարանային արտադրության նոր հանգույցի կամ դետալի շուկայական արժեքից կատարում է մասհանում այն չափով, որով, ըստ փորձագետի, նվազել է հանգույցի կամ դետալի շուկայական արժեքը վերանորոգման արդյունքում: Ընդ որում, սույն կետով նախատեսված մասհանումը չի կարող գերազանցել տվյալ համանման նոր հանգույցի կամ դետալի շուկայական արժեքի 30 տոկոսը: Սույն կետով նախատեսված դեպքերում վերանորոգող կազմակերպությունը վնասված և փոխարինման ենթակա դետալները կամ հանգույցները փոխարինում է համանման վերանորոգված գործարանային արտադրության հանգույցով կամ դետալով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ոչ գործարանային արտադրության նոր դետալով կամ հանգույցով: ***(24.2-րդ կետը լրաց. է 31/08/2015թ թիվ 80-L)***

ԲԱԺԻՆ 4

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ԳԼՈՒԽ 5

ՊԱՀԱՆՋՆԵՐ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

25. Փորձագիտական կազմակերպությունը պետք է բավարարի հետևյալ պահանջներին՝

1) ունի անշարժ գույքի գնահատման արտոնագիր և իրավասու պետական մարմնի կողմից տրված անշարժ գույքի գնահատման որակավորման վկայական ունեցող առնվազն երկու աշխատակից *(որպես անշարժ գույքին պատճառված վնաս գնահատելու իրավունքով օժտված փորձագետ որակավորվելու դեպքում),*

2) Բյուրոյի կողմից անշարժ գույքից բացի ցանկացած այլ գույքին պատճառված վնասներ գնահատելու համար որակավորում ստացած առնվազն երկու աշխատակից *(որպես անշարժ գույքից բացի ցանկացած այլ գույքին պատճառված վնաս գնահատելու իրավունքով օժտված փորձագետ որակավորվելու դեպքում)* ,

3) կազմակերպությունը կամ նրա կանոնադրական կապիտալում 50% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցը (մասնակիցները) ունի (ունեն) գնահատման գործունեություն իրականացնելու առնվազն մեկ տարվա փորձ,

4) վերջին ֆինանսական տարվա արդյունքներով կազմակերպությունը կամ նրա կանոնադրական կապիտալում 50% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցը (մասնակիցները) ունի (ունեն) առնվազն 3 000 000 Հայաստանի Հանրապետության դրամի շրջանառություն կամ տրված առնվազն 30 հատ գնահատման հաշվետվություն (եզրակացություն),

5) դիմում ներկայացրած անձի գործադիր մարմնի ղեկավարը, խորհրդի նախագահը, խորհրդի անդամները, նշանակալից մասնակիցները բավարարում են սույն կանոնների 47-րդ կետի 3-ից 8 ենթակետերով նախատեսված պահանջներին,

6) սույն կանոնների 26-րդ կետի 10-րդ ենթակետից բխող պատասխանատվությունն ապահովագրված է որևէ ապահովագրական ընկերության կողմից, ընդ որում, մեկ պատահարի գծով ապահովագրական գումարի չափը չպետք է պակաս լինի ըստ յուրաքանչյուր ԱՊՊԱ պատահարի գույքին պատճառված վնասների համար համագործակցող ապահովագրական ընկերությունների կողմից սահմանված առավելագույն ապահովագրական գումարից (սույն պահանջը կիրառվում է փորձագիտական կազմակերպության հետ կնքված պայմանագրի գրանցման պահից և միայն պայմանագրի գործողության ընթացքում):

ԳԼՈՒԽ 6

ՊԱՀԱՆՋՆԵՐ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

26. Փորձագիտական կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերն առնվազն պետք է պարունակեն՝

1) պայմանագրի գործողության ժամկետը և պայմանագրի գործողության վաղաժամկետ դադարման դեպքերը,

2) վնասների շրջանակը, որոնք պետք է գնահատվեն փորձագիտական կազմակերպության կողմից,

3) պատվերներ տալու ձևը և այն գնահատողին փոխանցելու եղանակը,

4) փորձագիտական կազմակերպության վարձատրության սկզբունքներն ու վարձատրության վճարման ժամկետները,

5) այն աշխարհագրական ծածկույթը, որի շրջանակներում փորձագիտական կազմակերպությունը պարտավորվում է կատարել պայմանագրով իրեն պատվիրված գնահատում, փորձագիտական կազմակերպության պարտավորությունը՝ հրաժարվելու փորձաքննություն իրականացնելուց, ինչպես նաև վնասված գույքի փորձաքննության համար նախնական զննություն իրականացնելուց այն դեպքերում, երբ ինքը փոխկապակցված է պատահարի մասնակիցներից որևէ մեկի հետ կամ որևէ կերպով առկա է շահերի բախում,

6) փորձագիտական կազմակերպության անվերապահ պարտավորությունը՝ գույքային վնասների գնահատման գործընթացում առաջնորդվել օրենքով և Բյուրոյի կանոններով սահմանված պահանջներով,

7) ապահովագրական ընկերության պարտավորությունը գույքային վնասների գնահատման գործընթացի նկատմամբ Բյուրոյի կողմից սահմանված պահանջների և դրանց յուրաքանչյուր փոփոխության մասին գրավոր տեղեկացնել փորձագիտական կազմակերպությանը՝ այդ պահանջները կամ դրանց փոփոխությունները ուժի մեջ մտնելուց առնվազն 1 աշխատանքային օր առաջ,

8) նշում այն մասին, որ փորձագիտական կազմակերպությունը ծանոթ է Բյուրոյի կողմից փորձագետների որակավորումից զրկման, ինչպես նաև իրենց միջև կնքված պայմանագիրը գրանցելու և գրանցումից հանելու հիմքերին, կարգին և հետևանքներին,

9) փորձագիտական կազմակերպության անվերապահ պարտավորությունը ապահովել տվյալ ապահովագրական ընկերության և Բյուրոյի ներկայացուցիչների կողմից պայմանագրի շրջանակներում գույքային վնասների գնահատման հետ կապված ցանկացած պահի իր մոտ ուսումնասիրությունների անխոչընդոտ իրականացումը և ըստ պահանջի տրամադրել դրանց հետ կապված բացատրություններ և հիմնավորումներ, ինչպես նաև փորձագիտական կազմակերպության պարտավորությունը ցանկացած պահի վերջիններիս տրամադրելու գնահատման ցանկացած հաշվետվությանը և գործընթացին վերաբերող փաստաթղթեր և հիմնավորումներ,

10) փորձագիտական կազմակերպության պարտավորությունը՝ իր կողմից ապահովագրական ընկերությանը կամ Բյուրոյին մատուցված ծառայությունների շրջանակներում հատուցելու իր մասնագիտական սխալի կամ անփութության, ինչպես նաև դիտավորյալ գործողությունների հետևանքով տուժողին, նրա իրավահաջորդին, ապահովադրին, ապահովագրված անձին, ապահովագրական ընկերությանը և (կամ) Բյուրոյին պատճառված վնասները, ինչպես նաև դրույթ՝ առ այն, որ փորձագիտական կազմակերպությունն ընդունում է, որ սույն ենթակետից բխող պատասխանատվությունը

մասնավորապես ենթադրում է իր անվերապահ պարտավորությունը Բյուրոյի կամ ապահովագրական ընկերության պահանջով լրիվ ծավալով հատուցել տուժողին, նրա իրավահաջորդին, ապահովադրին, ապահովագրված անձին, ապահովագրական ընկերությանը և (կամ) Բյուրոյին պատճառված վնասը, եթե ստուգիչ փորձաքննության արդյունքներով իր կողմից կատարված գնահատման արդյունքում ստացված վնասի մեծությունը փոփոխվել է սույն կանոնների 11-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված չափով (որի համար Բյուրոյի կողմից կիրառվել է համապատասխան պատասխանատվության միջոց), սակայն օրենքի և Բյուրոյի կանոնների ուժով ապահովագրական հատուցումն իրականացվել է իր կազմած (իր կողմից նշագրված) եզրակացության (հաշվետվության) հիման վրա (վնասի չափը հաշվարկվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե որքան ապահովագրական հատուցում կտրամադրվեր կամ չէր տրամադրվի վնաս կրած անձին կամ նրա կողմից, եթե հատուցման հիմքում դրվեին ստուգիչ փորձաքննության արդյունքները), բացառությամբ եթե տվյալ եզրակացության (հաշվետվության) հավաստիությունը հաստատվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով,

11) փորձագիտական կազմակերպության պարտավորությունը իր կողմից գնահատված վնասների գծով նշանակված լրացուցիչ, կրկնակի փորձաքննությունների կամ Բյուրոյի ստուգիչ փորձաքննությունների գործընթացներում, դրա հետ կապված վարչական և դատական վարույթներում ցանկացած շահագրգիռ անձի համապատասխան պահանջի առկայությամբ մասնակցելու և հիմնավորելու իր կողմից գնահատված մեծությունը և գնահատման ընտրված մեթոդաբանությունը,

12) փորձագիտական կազմակերպության պարտավորությունը՝ ապահովագրական ընկերության կամ Բյուրոյի կողմից համապատասխան գրավոր պատվերն ստանալուց հետո առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում նրանց տրամադրելու վնասի գնահատման հաշվետվություն (եզրակացություն), իսկ վնասը զննելու անհնարինության դեպքում՝ առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել վնասը զննելու անհնարինության մասին համապատասխան գրություն, ինչպես նաև առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել վնասված գույքի փորձաքննության համար նախնական զննություն,

13) փորձագիտական կազմակերպության պարտավորությունը՝ առանց ապահովագրական ընկերության (Բյուրոյի) ներկայացուցչի չիրականացնել գույքային վնասների գնահատման հետ կապված քննարկումներ, ճշտումներ և ցանկացած պարզաբանումներ տուժողի, նրա ներկայացուցչի կամ իրավահաջորդի, ապահովադրի կամ ապահովագրված անձի հետ,

14) գնահատման պայմանագրի շրջանակներում և գնահատման գործընթացում փորձագիտական կազմակերպության կողմից ստացված առևտրային կամ օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքի՝ օրենքով սահմանված կարգով պահպանման պարտավորությունը: ***(26-րդ կետի 5-րդ և 12-րդ ենթակետերը լրաց. են 31/08/2015թ թիվ 80-L)***

ԳԼՈՒԽ 7

ՊԱՀԱՆՋՆԵՐ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ (ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ) ՆԿԱՏՄԱՄԲ

27. Փորձագիտական կազմակերպության կողմից տրված գույքային վնասների գնահատման հաշվետվությունն (եզրակացությունը) առնվազն պետք է պարունակի՝

1) գնահատման պատվերը ստանալու ամսաթիվը,

1.1) փորձաքննության տեսակը (առաջնային, լրացուցիչ կամ կրկնակի),

2) գնահատման գործընթացի սկիզբն ու ավարտը,

3) գույքային վնասի գնահատման նպատակով գույքի զննության վայրը, օրը և ժամը՝ յուրաքանչյուր զննության համար,

4) գույքի զննությանը մասնակցած ապահովագրական ընկերության ներկայացուցչի անունը ազգանունը և զբաղեցրած պաշտոնը,

5) գնահատման ընթացքում օգտագործված փաստաթղթերի ցանկը,

6) գնահատման կիրառված մեթոդաբանությունը, մեթոդաբանությամբ նախատեսված գնահատման արդյունքները և դրանից ստացված մեծությունը,

7) հավելվածների տեսքով տրված վնասված գույքի ընդհանուր համակողմանի գունավոր ֆոտոլուսանկարները, ինչպես նաև գնահատման հաշվետվությունում (եզրակացությունում) որպես վնասված նշված բոլոր դետալների կամ հանգույցների ֆոտոլուսանկարները, որոնք հնարավոր է լուսանկարել: Ֆոտոլուսանկարները պետք է ներկայացված լինեն գունավոր և բավարար չափով տեսանելի մեծությամբ, ընդ որում շահագրգիռ անձանց կողմից ներկայացված պահանջի դեպքում տվյալ վնասված գույքի բոլոր ֆոտոլուսանկարները պետք է տրամադրվեն նաև էլեկտրոնային եղանակով,

7.1) Բյուրոյի կողմից պատվիրված փորձաքննությունների գծով նաև հավելվածի տեսքով՝ սույն կանոնների 21.3–րդ կետով նախատեսված զննության ընթացքում կազմված վնասված դետալների և (կամ) հանգույցների ցանկը,

8) գնահատումն իրականացնող փորձագիտական կազմակերպության աշխատակցի ստորագրությունը և կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի հաստատումը՝ ստորագրությամբ և կնիքով (առկայության դեպքում): ***(27-րդ կետի 7-րդ և 7.1-րդ ենթակետերը լրաց. են 31/08/2015թ թիվ 80-L)***

ԳԼՈՒԽ 8

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

28. Փորձագիտական կազմակերպությունները Խորհրդում անցնում են որակավորման փուլ, իսկ նրանց հետ կնքված պայմանագրերը՝ Կոմիտեում գրանցման փուլ:

29. Խորհրդի կողմից փորձագետների որակավորումն իրականացվում է հետևյալ ընթացակարգով.

1) Որակավորման հանձնաժողովը ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև բանավոր հարցազրույցի արդյունքում կայացնում է դիմում ներկայացրած անձին որակավորելու մասին դրական կամ բացասական եզրակացություն,

2) Որակավորման հանձնաժողովի կողմից բացասական եզրակացություն կայացվելու դեպքում թեկնածուի դիմումը համարվում է մերժված: Որակավորման հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն կայացվելու դեպքում համապատասխան որոշումը 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ուղարկվում է Խորհրդի

բոլոր անդամներին՝ բացառությամբ այն անդամների, որոնք մասնակցել են որակավորման հանձնաժողովի տվյալ նիստին,

3) Սույն կետի 2)-րդ ենթակետով սահմանված կարգով որակավորման հանձնաժողովի որոշումն ուղարկվելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Խորհրդի առնվազն երեք անդամից (ներառյալ՝ հանձնաժողովի կազմում դեմ քվեարկած Խորհրդի անդամները) հանձնաժողովի ընդունած որոշման վերաբերյալ անհամաձայնություն չստացվելու դեպքում դիմում ներկայացրած անձը համարվում է Խորհրդի կողմից որակավորված որակավորման հանձնաժողովի կողմից համապատասխան որոշումը կայացվելու պահից,

4) Սույն կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով Խորհրդի առնվազն երեք անդամի անհամաձայնությունն ստացվելու դեպքում դիմում ներկայացրած անձի որակավորման հարցն ընդգրկվում է Խորհրդի առաջիկա նիստի օրակարգում և ընդունվում ընդհանուր կարգով:

30. Սույն կանոնների 29-րդ կետի 3)-րդ ենթակետով նախատեսված կարգով փորձագետին որակավորելու պահից՝ 10-օրյա ժամկետում, Բյուրոն իր ինտերնետային կայքում հրապարակում է որակավորված անձի անվանումը, թույլատրված գործունեությունը, որակավորման գործողության ժամկետը, ապահովագրական ընկերության անվանումը, որի հետ կնքված պայմանագիրը գրանցված է Բյուրոյի կողմից, և նշումներ որակավորումից զրկված լինելու կամ որակավորումը կասեցնելու կամ որակավորումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

31. Փորձագետի որակավորումը տրվում է մեկ տարի ժամկետով:

32. Որակավորված փորձագիտական կազմակերպությունները հաշվառվում են Բյուրոյում վարվող էլեկտրոնային գրանցամատյանում, որտեղ գրառվում են որակավորված կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, գործունեության հիմնական հասցեն, հեռախոսահամարը, որակավորման գործողության ժամկետը, թույլատրված գործունեությունը, պայմանագրի գրանցման ամսաթիվը, ապահովագրական ընկերության անվանումը, որի հետ կնքված պայմանագիրը գրանցված է Բյուրոյի կողմից, փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվություն և նշումներ որակավորումից զրկված լինելու կամ որակավորումը կասեցնելու մասին:

33. Խորհրդի կողմից փորձագիտական կազմակերպությանը որակավորում չտալու դեպքում, փորձագիտական կազմակերպությունը որակավորման տրամադրումը մերժելու պահից՝ մեկ ամսվա ընթացքում, չի կարող փորձագետի որակավորում տրամադրելու դիմում ներկայացնել Բյուրո:

34. Որակավորում ստանալու համար Բյուրո դիմած, սակայն որակավորում չստացած փորձագիտական կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվությունը նույնպես հաշվառվում է Բյուրոյի համապատասխան էլեկտրոնային գրանցամատյանում:

35. ԱՊՊԱ ոլորտում գույքային վնասների գնահատման որակավորում ստանալու համար փորձագիտական կազմակերպությունը Բյուրո ներկայացնում է՝

1) փորձագիտական կազմակերպության իրավասու մարմնի կամ նրա լիազորած անձի կողմից ներկայացված դիմում՝ որակավորում ստանալու համար (համաձայն ձև 4-ի),

2) փորձագիտական կազմակերպության պետական գրանցման վկայականի, հարկ վճարողի հաշվառման համարի, կանոնադրության, ինչպես նաև սույն կանոնների 25-րդ

կետի 1-ին ենթակետով նախատեսված արտոնագրերի (անշարժ գույքին պատճառված վնաս գնահատելու իրավունքով օժտված փորձագետի որակավորում տրամադրելու դիմում ներկայացվելու դեպքում) պատճենները,

3) փորձագիտական կազմակերպության կամ նրա կանոնադրական կապիտալում 50% և ավելի մասնակցություն ունեցող մասնակցի (մասնակիցների) վերջին ֆինանսական տարվա համար հարկային մարմիններին ներկայացված ֆինանսական հաշվետվությունները կամ գնահատման հաշվետվությունների (եզրակացությունների) պատճենները, իսկ գնահատման հաշվետվությունների (եզրակացությունների) պատճենները տրամադրելու անհնարինության դեպքում՝ կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կողմից տրված տեղեկանք, որը հավաստում է վերջին մեկ տարվա ընթացքում կազմակերպության կողմից առնվազն 30 հատ գնահատման հաշվետվություն (եզրակացություն) տալու փաստը, և որը պարունակում է տեղեկանքը տրամադրած կազմակերպության համաձայնությունը մեկ տարվա ընթացքում ցանկացած ժամանակ Բյուրոյի պահանջով հնարավորություն ընձեռել նրան ստուգել տեղեկանքում նշված տեղեկատվության հավաստիությունը,

4) սույն կանոնների 25-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված գործունեության փորձը հավաստող փաստաթղթեր,

5) հայտարարություն սույն կանոնների 25-րդ կետի 5-րդ ենթակետի հիմքերի բացակայության վերաբերյալ,

6) կազմակերպության՝ սույն կանոնների 25-րդ կետի համապատասխանաբար 1-ին կամ 2-րդ ենթակետով նախատեսված որակավորված աշխատակիցների անձնագրերի, նրանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերի և որակավորման վկայականների (առկայության դեպքում) պատճենները: ***(35-րդ կետի 2-ին ենթակետը փոփոխվել է 23/06/2015թ թիվ 68-Լ որոշմամբ)***

36. Գործադիր տնօրենը և (կամ) Որակավորման հանձնաժողովը (Խորհուրդը) կարող են փորձագիտական կազմակերպությունից պահանջել նաև սույն կանոնների 35-րդ կետում արտացոլված փաստաթղթերի կամ տեղեկատվության արժանահատավատությունը հիմնավորող այլ տվյալներ, նյութեր, փաստաթղթեր և տեղեկանքներ, ինչպես նաև կատարել փաստաթղթերում տրված տեղեկատվությունը ճշտելու նպատակով համապատասխան ուսումնասիրություններ: Որակավորման հանձնաժողովը (Խորհուրդը) կարող է փորձագիտական կազմակերպությունից պահանջել նաև այլ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են համապատասխան որոշում ընդունելու համար:

37. Հանձնաժողովը որակավորում տրամադրելու կամ այն մերժելու մասին որոշում է ընդունում փորձագիտական կազմակերպության կողմից՝ սույն կանոնների 35-րդ կետում նշված փաստաթղթերը Բյուրո ներկայացնելու պահից՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում: Փաստաթղթերը ոչ ամբողջական կամ թերի լինելու դեպքում Բյուրոյի գործադիր տնօրենը թեկնածուին որակավորում տալու հարցը Հանձնաժողով չի ներկայացնում և թեկնածուի կողմից դիմումը ստանալու պահից՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր իրազեկում է նրան այդ մասին: Ծանուցման պահից՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, թեկնածուի կողմից բոլոր փաստաթղթերը պատշաճ

կերպով ներկայացվելու դեպքում դիմումը համարվում է ընդունված սկզբնական ներկայացման օրը:

38. Խորհուրդը (Որակավորման հանձնաժողովը) կարող է իր նիստին հրավիրել այն փորձագիտական կազմակերության գործադիր մարմնի ղեկավարին, որի որակավորման հարցը ներառված է նիստի օրակարգում՝ նիստից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ տեղեկացնելով նրան այդ մասին:

39. Խորհուրդը (Որակավորման հանձնաժողովը) մերժում է փորձագիտական կազմակերպությանը որակավորում տալը, եթե՝

1) ներկայացված տվյալները Խորհրդի (հանձնաժողովի) հիմնավորված կարծիքով լիարժեք, արժանահավատ կամ ամբողջական չեն,

2) բավարար կամ լիարժեք ապահովված չեն սույն կանոնների 35-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հայտարարությունները կամ դրանք Որակավորման հանձնաժողովի (Խորհրդի) հիմնավորված կարծիքով չեն համապատասխանում իրականությանը,

3) կազմակերպության՝ փորձագետի որակավորում տրամադրելու մասին նախորդ մերժված դիմումից հետո մեկ ամիսը չի լրացել,

4) Փորձագիտական կազմակերպությունը դիմելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում Բյուրոյի կողմից զրկվել է փորձագետի որակավորումից, բացառությամբ սույն կանոնների 11.1-րդ կետի 2)-րդ ենթակետով սահմանված դեպքերի,

5) Խորհուրդը (Որակավորման հանձնաժողովը) փորձագիտական կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի հետ բանավոր հարցազրույցի արդյունքում (եթե նման հարցազրույց առկա է եղել), ունի ձևավորված ոչ դրական կարծիք փորձագիտական կազմակերպության աշխատանքի կազմակերպման մեխանիզմների մասին,

6) Խորհուրդը (Որակավորման հանձնաժողովը) որոշել է հրավիրել փորձագիտական կազմակերպության ղեկավարին հարցազրույց անցկացնելու համար, սակայն վերջինս անհիմն պատճառներով հրաժարվել է ներկայանալ: ***(39-րդ կետի 3-րդ ենթակետը փոփոխվել է 23/06/2015թ թիվ 68-Լ որոշմամբ)***

40. Խորհուրդը կարող է նախազգուշացնել փորձագետին, որակավորումից զրկել նրան կամ կասեցնել նրա որակավորման գործողությունը սույն կանոնների համապատասխանաբար 11-րդ, 11.1-րդ կամ 11.2-րդ կետով նախատեսված դեպքերում: Խորհուրդը նախազգուշացնում է փորձագետին, զրկում է նրան որակավորումից կամ կասեցնում է նրա որակավորման գործողությունը Որակավորման հանձնաժողովի որոշման հիման վրա՝ սույն կանոնների 29-րդ կետով սահմանված կարգով:

41. *(ուժը կորցրել է «Հայաստանի ավդիտապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 22.07.2011թ թիվ 62-Լ որոշմամբ)*

42. Փորձագիտական կազմակերպության հետ կնքվող պայմանագրի գրանցումն իրականացնելու համար ապահովագրական ընկերությունը Բյուրո է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) ապահովագրական ընկերության իրավասու մարմնի կամ նրա լիազորած անձի կողմից ներկայացված միջնորդագիր՝ փորձագիտական կազմակերպության հետ կնքվող պայմանագիրը գրանցելու համար (համաձայն ձև 5-ի),

2) ապահովագրական ընկերության և փորձագիտական կազմակերպության միջև կնքված պայմանագրի պատճենը՝ «Իսկականի հետ ճիշտ է» նշումով՝ հաստատված ապահովագրական ընկերության գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությամբ և կնիքով (առկայության դեպքում).

3) ապահովագրական ընկերության կողմից գույքային վնասի գնահատման գործառույթը տվյալ փորձագիտական կազմակերպությանը պատվիրակելու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի թույլտվությունը հավաստող փաստաթղթի պատճենը,

4) Տեղեկանք՝ որակավորված փորձագիտական կազմակերպության հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ (համաձայն ձև 6-ի): Ընդ որում տեղեկանքում նշված փոխկապակցված անձանց վերաբերյալ յուրաքանչյուր փոփոխության դեպքում փորձագիտական կազմակերպությունը պարտավոր է Բյուրո ներկայացնել նոր տեղեկանք՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո՝ 10-օրյա ժամկետում,

5) սույն կանոնների 25-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված ապահովագրության պայմանագրի պատճենը՝ «Իսկականի հետ ճիշտ է» նշումով՝ հաստատված ապահովագրական ընկերության գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությամբ և, առկայության դեպքում, կնիքով,

6) Փորձագիտական կազմակերպության հետ կնքվող պայմանագրի գրանցումն իրականացնելու համար սույն կանոնների 42.1-րդ կետով սահմանված վճարի իրականացումը հավաստող փաստաթղթի պատճենը:

42.1. Փորձագիտական կազմակերպության հետ կնքվող պայմանագրի գրանցման համար գանձվում է գրանցման վճար 10.000 ՀՀ դրամի չափով:

43. Կոմիտեն փորձագիտական կազմակերպության հետ կնքված պայմանագրի գրանցման կամ գրանցումը մերժելու մասին որոշումն ընդունում է սույն կանոններով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում: Կոմիտեի կողմից սույն կետով նախատեսված դրական որոշում կայացվելու դեպքում Գործադիր տնօրենը գրանցում է պայմանագիրը:

44. Կոմիտեն որոշում է կայացնում փորձագիտական կազմակերպության հետ կնքված պայմանագրի գրանցումը մերժելու մասին, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը և տեղեկությունները թերի են կամ ոչ արժանահավատ,

2) փորձագիտական կազմակերպության հետ կնքված պայմանագիրը չի համապատասխանում սույն կանոններով նախատեսված պահանջներին,

3) փորձագիտական կազմակերպության որակավորման ժամկետն ավարտվել է կամ վերջինս զրկվել է որակավորումից կամ փորձագետի որակավորումը ժամանակավորապես կասեցված է:

45. Ապահովագրական ընկերությունը պարտավոր է փորձագիտական կազմակերպության հետ կնքված պայմանագիրը դադարեցնելուց կամ փոփոխելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, այդ մասին հայտնել Բյուրոյին՝ նշելով նաև փորձագիտական կազմակերպության հետ կնքված պայմանագրի դադարեցման հիմքը:

46. Գործադիր տնօրենը Կոմիտեի որոշման հիման վրա գրանցումից հանում է փորձագիտական կազմակերպության հետ կնքված պայմանագիրը, եթե՝

1) գրանցումից հետո փորձագիտական կազմակերպության և ապահովագրական ընկերության միջև կնքված պայմանագրի դրույթները փոփոխվել են, և այդ փոփոխության արդյունքում պայմանագիրը այլևս չի համապատասխանում սույն կանոնների պահանջներին,

2) գրանցումից հետո պարզվել է, որ գրանցման ժամանակ Բյուրո են ներկայացվել կեղծ կամ անարժանահավատ փաստաթղթեր կամ տեղեկություններ,

3) գրանցումից հետո փորձագիտական կազմակերպությունը զրկվել է փորձագետի որակավորումից կամ ուժը կորցրել է նրա որակավորումը,

4) փորձագիտական կազմակերպության և ապահովագրական ընկերության միջև կնքված պայմանագիրը լուծվել է:

ԲԱԺԻՆ 5

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ԳԼՈՒԽ 9

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՆՎԱՀԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

47. Ֆիզիկական անձ փորձագետը պետք է բավարարի հետևյալ պահանջներին՝

1) ունենա Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմնի կողմից տրված անշարժ գույքի գնահատման որակավորման վկայական (որպես անշարժ գույքին պատճառված վնաս գնահատելու իրավունքով օժտված փորձագետ որակավորվելու դեպքում),

2) ունենա հետևյալ որակավորումներից կամ աշխատանքային փորձից առնվազն մեկը՝

ա. Բարձրագույն կրթություն ունենալու դեպքում վերջին հինգ տարվա ընթացքում ունենա ապահովագրական ընկերությունում կամ գնահատման գործունեությամբ զբաղվող մասնագիտացված կազմակերպությունում առնվազն մեկ տարվա գնահատում իրականացնելու աշխատանքային փորձ և այդ ժամանակահատվածում ունենա իր կողմից տրված առնվազն 30 հատ գնահատման հաշվետվություն (եզրակացություն), իսկ բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն երեք տարվա այդպիսի աշխատանքային փորձ և այդ ժամանակահատվածում տրված առնվազն 100 հատ գնահատման հաշվետվություն (եզրակացություն), կամ՝

բ. ունենա գույքային վնասի գնահատման բնագավառում կամ դրան հարակից բնագավառներում համապատասխան գիտելիքներ և որակավորում, ինչը հավաստված է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի և (կամ) Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կողմից ապրանքագիտական փորձաքննության ոլորտում շնորհված որակավորման վկայականով կամ օտարերկրյա հաստատությունների կողմից վերջին հինգ տարվա ընթացքում տրված փաստաթղթերով կամ որակավորման վկայականներով: Ընդ որում, օտարերկրյա կրթական հաստատությունների կողմից տրված փաստաթղթերի կամ որակավորման վկայականների՝ Բյուրոյի կողմից ընդունելիությունը որոշում է Խորհուրդը (Որակավորման հանձնաժողովը):

3) անգործունակ կամ սահմանափակ գործունակ չէ,

4) դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն,

5) դատավճռով զրկված չէ գույքային վնասների գնահատման իրավունքից,

6) քրեական գործով ներգրավված չէ, որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ,

7) ճանաչված չէ սնանկ և չունի չմարված կամ չներված պարտավորություններ,

8) չունի վատ համբավ կամ հեղինակություն:

9) ունի փորձագետի համար բավարար մասնագիտական և գործարար որակներ, մասնավորապես՝

ա. տեղեկացվածությունը ԱՊՊԱ ոլորտի իրավական ակտերին և սույն կանոններում արտացոլված սկզբունքներին և պահանջներին,

բ. ֆինանսական և վիճակագրական տվյալներ վերլուծելու ունակությունները,

գ. հաղորդակցման հմտությունները և կազմակերպչական ձիրքը,

դ. արագ կողմնորոշվելու, ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակությունը,

ե. աշխատանքի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքը և բարձր պատասխանատվության զգացումը,

զ. օբյեկտիվ և անկողմնակալ որոշումներ ընդունելու կարողությունը,

10) սույն կանոնների 48-րդ կետի 7-րդ ենթակետից բխող պատասխանատվությունն ապահովագրված է որևէ ապահովագրական ընկերության կողմից, ընդ որում, մեկ պատահարի գծով ապահովագրական գումարի չափը չպետք է պակաս լինի ըստ յուրաքանչյուր ԱՊՊԱ պատահարի գույքին պատճառված վնասների համար համագործակցող ապահովագրական ընկերությունների կողմից սահմանված առավելագույն ապահովագրական գումարից (սույն պահանջը կիրառվում է փորձագետի հետ կնքված աշխատանքային պայմանագրի գրանցման պահից և միայն պայմանագրի գործողության ընթացքում),

11) ունենա Բյուրոյի համապատասխան կանոններով նախատեսված կարգով տրված՝ հետևյալ ոլորտներում մասնագիտական գիտելիքների թեսթավորման ժամանակ դրական արդյունք ցուցաբերած լինելը հավաստող գործող հավաստագիր՝

ա. ԱՊՊԱ ոլորտը կարգավորող օրենքներ և Բյուրոյի կանոններ (ընդհանուր) և

բ. ԱՊՊԱ պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատում (մասնագիտական):

ԳԼՈՒԽ 10

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

48. Ապահովագրական ընկերության աշխատակից փորձագետների հետ կնքված աշխատանքային պայմանագրերն առնվազն պետք է պարունակեն՝

1) վնասների շրջանակը, որոնք պետք է գնահատվեն փորձագետի կողմից,

2) փորձագետի անվերապահ պարտավորությունը՝ գույքային վնասների գնահատման գործընթացքում առաջնորդվել օրենքով և Բյուրոյի կանոններով սահմանված պահանջներով,

3) այն աշխարհագրական ծածկույթը, որի շրջանակներում փորձագետը պարտավորվում է կատարել պայմանագրով իրեն հանձնարարված գնահատում,

4) փորձագետի պարտավորությունը՝ հրաժարվելու փորձաքննություն իրականացնելուց, ինչպես նաև վնասված գույքի փորձաքննության համար նախնական զննություն իրականացնելուց այն դեպքերում, երբ ինքը փոխկապակցված է պատահարի մասնակիցներից որևէ մեկի հետ կամ որևէ կերպով առկա է շահերի բախում,

5) նշում այն մասին, որ փորձագետը ծանոթ է Բյուրոյի կողմից փորձագետի որակավորումից զրկման, ինչպես նաև կնքված պայմանագիրը գրանցելու և գրանցումից հանելու հիմքերին, կարգին և հետևանքներին,

6) ապահովագրական ընկերության պարտավորությունը գույքային վնասների գնահատման գործընթացի նկատմամբ Բյուրոյի կողմից սահմանված պահանջների և դրանց յուրաքանչյուր փոփոխության մասին գրավոր տեղեկացնել փորձագետին՝ այդ պահանջները կամ դրանց փոփոխությունները ուժի մեջ մտնելուց առնվազն 1 աշխատան-քային օր առաջ,

7) փորձագետի լիակատար նյութական պատասխանատվությունը իր կողմից փորձաքննության իրականացման ընթացքում իր մասնագիտական սխալի կամ անփութության, ինչպես նաև դիտավորյալ գործողությունների հետևանքով տուժողին, նրա իրավահաջորդին, ապահովադրին, ապահովագրված անձին, ապահովագրական ընկերությանը և (կամ) Բյուրոյին պատճառված վնասների համար, ինչպես նաև դրույթ՝ առ այն, որ փորձագետը ընդունում է, որ սույն ենթակետից բխող պատասխանատվությունը մասնավորապես ենթադրում է իր անվերապահ պարտավորությունը Բյուրոյի կամ ապահովագրական ընկերության պահանջով լրիվ ծավալով հատուցել տուժողին, նրա իրավահաջորդին, ապահովադրին, ապահովագրված անձին, ապահովագրական ընկերությանը և (կամ) Բյուրոյին պատճառված վնասը, եթե ստուգիչ փորձաքննության արդյունքներով իր կողմից կատարված գնահատման արդյունքում ստացված վնասի մեծությունը փոփոխվել է սույն կանոնների 11-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված չափով (որի համար Բյուրոյի կողմից կիրառվել է համապատասխան պատասխանատվության միջոց), սակայն օրենքի և Բյուրոյի կանոնների ուժով ապահովագրական հատուցումն իրականացվել է իր կազմած (իր կողմից նշագրված) եզրակացության (հաշվետվության) հիման վրա (վնասի չափը հաշվարկվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե որքան ապահովագրական հատուցում կտրամադրվեր կամ չէր տրամադրվի վնաս կրած անձին կամ նրա կողմից, եթե հատուցման հիմքում դրվեին ստուգիչ փորձաքննության արդյունքները), բացառությամբ եթե տվյալ եզրակացության (հաշվետվության) հավաստիությունը հաստատվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով,

8) փորձագետի պարտավորությունը իր կողմից գնահատված վնասների գծով նշանակված լրացուցիչ, կրկնակի փորձաքննությունների կամ Բյուրոյի ստուգիչ փորձաքննությունների գործընթացներում, դրա հետ կապված վարչական և դատական վարույթներում ցանկացած շահագրգիռ անձի համապատասխան պահանջի առկայությամբ մասնակցելու և հիմնավորելու իր կողմից գնահատված մեծությունը և գնահատման ընտրված մեթոդաբանությունը,

9) փորձագետի պարտավորությունը՝ ապահովագրական ընկերության իրավասու մարմնի կամ նրա ղեկավարի գրավոր հանձնարարականն ստանալուց հետո առավելագույնը 10 (իսկ համաձայնեցված հայտարարագրով հատուցման գործընթացների դեպքում՝ առավելագույնը 3) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել վնասի գնահատման հաշվետվություն (եզրակացություն) կամ առավելագույնը 3, իսկ համաձայնեցված հայտարարագրով հատուցման գործընթացների դեպքում՝ առավելագույնը 1 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել վնասը զննելու անհնարինության գրավոր բացատրություն, ինչպես նաև առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել վնասված գույքի փորձաքննության համար նախնական զննություն,

10) գնահատման պայմանագրի շրջանակներում և գնահատման գործընթացում փորձագետի կողմից ստացված առևտրային կամ օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքի օրենքով սահմանված կարգով պահպանման պարտավորությունը: ***(48-րդ կետի 4-րդ և 9-րդ ենթակետերը լրաց. են 31/08/2015թ թիվ 80-L)***

ԳԼՈՒԽ 11

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

49. Ֆիզիկական անձ փորձագետների կողմից տրվող գնահատման հաշվետվությունն (եզրակացությունը) առնվազն պետք է ներառի՝

1) գնահատում իրականացնելու համար հանձնարարականն իր կողմից ստանալու ամսաթիվը,

1.1) փորձաքննության տեսակը (առաջնային, լրացուցիչ կամ կրկնակի),

2) գնահատման գործընթացի սկիզբն ու ավարտը,

3) գույքային վնասի գնահատման նպատակով գույքի զննության վայրը, օրը և ժամը՝ յուրաքանչյուր զննության համար,

4) գնահատման ընթացքում օգտագործված փաստաթղթերի ցանկը,

5) գնահատման կիրառված մեթոդաբանությունը, մեթոդաբանությամբ նախատեսված գնահատման արդյունքները և դրանից ստացված մեծությունը,

6) հավելվածների տեսքով տրված վնասված գույքի ընդհանուր համակողմանի գունավոր ֆոտոլուսանկարները, ինչպես նաև գնահատման հաշվետվությունում (եզրակացությունում) որպես վնասված նշված բոլոր դետալների, հանգույցների ֆոտոլուսանկարները, որոնք հնարավոր է լուսանկարել: Ֆոտոլուսանկարները պետք է ներկայացված լինեն գունավոր և բավարար չափով տեսանելի մեծությամբ, ընդ որում շահագրգիռ անձանց կողմից ներկայացված պահանջի դեպքում տվյալ վնասված գույքի բոլոր ֆոտոլուսանկարները պետք է տրամադրվեն նաև էլեկտրոնային եղանակով,

6.1) Բյուրոյի կողմից պատվիրված փորձաքննությունների գծով նաև հավելվածի տեսքով՝ սույն կանոնների 21.3–րդ կետով նախատեսված զննության ընթացքում կազմված վնասված դետալների և (կամ) հանգույցների ցանկը,

7) ապահովագրական ընկերության աշխատակից՝ ֆիզիկական անձ փորձագետի ստորագրությունը: ***(49-րդ կետի 6.1-րդ ենթակետը լրաց. է 21/07/2015թ թիվ 77-Լ որոշմամբ, իսկ 6-րդ և 6.1-րդ ենթակետերը լրաց. են 31/08/2015թ թիվ 80-Լ)***

ԳԼՈՒԽ 12

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

50. Ֆիզիկական անձինք Խորհրդում անցնում են որակավորման փուլ, իսկ նրանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերը՝ Կոմիտեում գրանցման փուլ: Որակավորման փուլը ենթադրում է սույն կանոններով սահմանված ֆիզիկական անձին ներկայացվող պահանջների համապատասխանության ստուգում և Որակավորման հանձնաժողովի (Խորհրդի) կողմից սույն կանոններով նախատեսված հարցերի շրջանակներում հարցազրույցի անցկացում: Որակավորման հանձնաժողովը (Խորհուրդը) փորձագետի որակավորում տրամադրելու դիմում ներկայացրած անձին կարող է չհրավիրել հարցազրույցի այն դեպքերում, երբ նա նախկինում արդեն մեկ անգամ որակավորվել է Բյուրոյի կողմից և ԱՊՊԱ ոլորտում նրա իրականացրած մասնագիտական գործունեության ընթացքում խախտումներ չեն արձանագրվել: ***(50-րդ կետը փոփոխվել է 23/06/2015թ թիվ 68-Լ որոշմամբ)***

51. Ֆիզիկական անձ փորձագետի որակավորում Խորհուրդը տալիս է սույն կանոնների 29-րդ կետով սահմանված ընթացակարգով:

52. Սույն կանոնների 51-րդ կետով նախատեսված կարգով փորձագետին որակավորելու պահից՝ 10-օրյա ժամկետում, Բյուրոն իր ինտերնետային կայքում հրապարակում է որակավորված անձի անունը, ազգանունը, թույլատրված գործունեությունը, որակավորման գործողության ժամկետը, ապահովագրական ընկերության անվանումը, որի հետ կնքված պայմանագիրը գրանցված է Բյուրոյի կողմից, և նշումներ որակավորումից զրկված լինելու կամ որակավորումը կասեցնելու մասին:

53. Փորձագետի որակավորումը տրվում է մինչև սույն կանոնների 47-րդ կետի 11)-րդ ենթակետով նախատեսված հավաստագրի վավերության ժամկետի ավարտը: Ընդ որում, փորձագետի կողմից համապատասխան նոր հավաստագիր ստանալու դեպքում նրա որակավորումը համարվում է երկարաձգված մինչև այդ հավաստագրի գործողության ժամկետի ավարտը:

54. Որակավորված ֆիզիկական անձ փորձագետները հաշվառվում են Բյուրոյում վարվող էլեկտրոնային գրանցամատյանում, որտեղ գրառվում են որակավորված անձի անունը, ազգանունը, անձնագրի սերիան և համարը, բնակության վայրը, հեռախոսահամարը, որակավորման գործողության ժամկետը, թույլատրված գործունեությունը, պայմանագրի գրանցման ամսաթիվը, ապահովագրական ընկերության անվանումը, որի հետ կնքված պայմանագիրը գրանցված է Բյուրոյի կողմից, փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվություն և նշումներ որակավորումից զրկված լինելու կամ որակավորումը կասեցնելու մասին:

55. Խորհրդի (Որակավորման հանձնաժողովի) կողմից ֆիզիկական անձ փորձագետին որակավորում չտալու դեպքում, ֆիզիկական անձը որակավորման տրամադրումը

մերժելու պահից հետո մեկ ամսվա ընթացքում չի կարող դիմել Բյուրո՝ կրկին որակավորում անցնելու համար:

56. Որակավորում ստանալու համար Բյուրո դիմած, սակայն որակավորում չստացած ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկատվությունը նույնպես հաշվառվում է Բյուրոյի համապատասխան էլեկտրոնային գրանցամատյանում:

57. Որակավորում ստանալու համար ֆիզիկական անձինք Բյուրո են ներկայացնում՝

1) դիմում որակավորում ստանալու համար (համաձայն ձև 4-ի),

2) անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

3) իրավասու պետական մարմնի կողմից տրված անշարժ գույքի գնահատման որակավորման վկայականի պատճենը (անշարժ գույքին պատճառված վնաս գնահատելու իրավունքով օժտված փորձագետի որակավորում տրամադրելու դիմում ներկայացվելու դեպքում),

4) սույն կանոնների 47-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» կամ «բ» պարբերությամբ նախատեսված պահանջներին բավարարումը հավաստող փաստաթղթեր՝ համապատասխանաբար բարձրագույն ուսումնական հաստատության կողմից տրված դիպլոմի պատճենը կամ պետական քննական հանձնաժողովի որոշման հիման վրա համապատասխան որակավորմամբ բարձրագույն կրթություն ստացած լինելու փաստը հավաստող այլ փաստաթուղթ, աշխատանքային գրքույկ, ապահովագրական ընկերության կամ գնահատման գործունեությամբ զբաղվող մասնագիտացված կազմակերպության իրավասու մարմնի կամ նրա լիազորած անձի կողմից տրված համապատասխան տեղեկանքներ, գնահատման հաշվետվությունների (եզրակացությունների) պատճեններ, իսկ գնահատման հաշվետվությունների (եզրակացությունների) պատճենները տրամադրելու անհնարինության դեպքում՝ ապահովագրական ընկերության կամ գնահատման գործունեությամբ զբաղվող մասնագիտացված կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կողմից տրված տեղեկանք, որը հավաստում է դիմումատուի կողմից սույն կանոնների 47-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված ժամանակահատվածում համապատասխան թվով գնահատման հաշվետվություն (եզրակացություն) տալու փաստը, և որը պարունակում է տեղեկանքը տրամադրած կազմակերպության համաձայնությունը մեկ տարվա ընթացքում ցանկացած ժամանակ Բյուրոյի պահանջով հնարավորություն ընձեռել նրան ստուգել տեղեկանքում նշված տեղեկատվության հավաստիությունը կամ որակավորման վկայական,

5) հայտարարություն սույն կանոնների 47-րդ կետի 3-ից 7 ենթակետերով նախատեսված հիմքերի բացակայության վերաբերյալ: ***(57-րդ կետի 3-րդ ենթակետը փոփոխվել է 23/06/2015թ թիվ 68-Լ որոշմամբ)***

58. Բյուրոյի գործադիր տնօրենը և (կամ) Որակավորման հանձնաժողովը (Խորհուրդը) կարող են ֆիզիկական անձից պահանջել նաև սույն կանոնների 57-րդ կետում արտացոլված փաստաթղթերի կամ տեղեկատվության արժանահատավատությունը հիմնավորող այլ տվյալներ, նյութեր, փաստաթղթեր և տեղեկանքներ, ինչպես նաև կատարել փաստաթղթերում տրված տեղեկատվությունը ճշտելու նպատակով համապատասխան ուսումնասիրություններ: Որակավորման հանձնաժողովը (Խորհուրդը)

կարող է փորձագետից պահանջել նաև այլ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են համապատասխան որոշում ընդունելու համար:

59. Որակավորման հանձնաժողովը որակավորում տրամադրելու կամ այն մերժելու մասին որոշում է ընդունում թեկնածուի կողմից՝ սույն կանոնների 57-րդ կետում նշված փաստաթղթերը Բյուրո ներկայացնելուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում: Բյուրոն տեղեկացնում է թեկնածուին հարցազրույցի հրավիրելու մասին՝ Որակավորման հանձնաժողովի այն նիստից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ, որտեղ ընդգրկված է տվյալ թեկնածուին փորձագետի որակավորում տրամադրելու հարցը: Փաստաթղթերը ոչ ամբողջական կամ թերի լինելու դեպքում Բյուրոյի գործադիր տնօրենը թեկնածուին որակավորում տալու հարցը Որակավորման հանձնաժողով չի ներկայացնում և թեկնածուի կողմից դիմումը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր իրազեկում է թեկնածուին այդ մասին: Ծանուցման պահից՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, թեկնածուի կողմից բոլոր փաստաթղթերը պատշաճ կերպով ներկայացվելու դեպքում դիմումը համարվում է ընդունված սկզբնական ներկայացման օրը:

60. Որակավորման հանձնաժողովը (Խորհուրդը) որոշում է կայացնում ֆիզիկական անձին փորձագետի որակավորում տրամադրելու դիմումը մերժելու մասին, եթե՝

1) ներկայացված տվյալները Որակավորման հանձնաժողովի (Խորհրդի) հիմնավորված կարծիքով լիարժեք, արժանահավատ կամ ամբողջական չեն,

2) Որակավորման հանձնաժողովի (Խորհրդի) կողմից սույն կանոնների 47-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը կամ որակավորման վկայականները ընդունելի չեն,

3) բավարար կամ լիարժեք ապահովված չեն սույն կանոնների 57-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված հայտարարությունները կամ դրանք Որակավորման հանձնաժողովի (Խորհրդի) հիմնավորված կարծիքով չեն համապատասխանում իրականությանը,

4) Որակավորման հանձնաժողովը (Խորհուրդը) սույն կանոնների 47-րդ կետի 9-րդ ենթակետով նշված հարցերի շրջանակներում կայացած բանավոր հարցազրույցի արդյունքում ունի ձևավորված ոչ դրական կարծիք թեկնածուի մասնագիտական և (կամ) գործարար որակների վերաբերյալ,

5) թեկնածուի՝ փորձագետի որակավորում ստանալու նախորդ մերժված դիմումից հետո մեկ ամիսը չի լրացել,

6) թեկնածուն դիմելու պահից նախորդ երեք տարիների ընթացքում Բյուրոյի կողմից զրկվել է փորձագետի որակավորումից, բացառությամբ սույն կանոնների 11.1-րդ կետի 2)-րդ ենթակետով սահմանված դեպքերի,

7) թեկնածուն չունի սույն կանոնների 47-րդ կետի 11)-րդ ենթակետով նախատեսված գործող հավաստագիր: ***(60-րդ կետը փոփոխվել է 23/06/2015թ թիվ 68-Լ որոշմամբ)***

61. Խորհուրդը կարող է նախազգուշացնել փորձագետին, որակավորումից զրկել նրան կամ կասեցնել նրա որակավորման գործողությունը սույն կանոնների համապատասխանաբար 11-րդ, 11.1-րդ կամ 11.2-րդ կետով նախատեսված դեպքերում: Խորհուրդը նախազգուշացնում է փորձագետին, զրկում է նրան որակավորումից կամ

կասեցնում է նրա որակավորման գործողությունը Որակավորման հանձնաժողովի որոշման հիման վրա՝ սույն կանոնների 29-րդ կետով սահմանված կարգով:

62. *(ուժը կորցրել է «Հայաստանի ավոտապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 22.07.2011թ թիվ 62-Լ որոշմամբ)*

63. Ֆիզիկական անձ փորձագետի գրանցումն իրականացնելու համար ապահովագրական ընկերությունը Բյուրո է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) ապահովագրական ընկերության միջնորդագիր՝ փորձագետի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը գրանցելու համար (համաձայն ձև 5-ի),

2) ապահովագրական ընկերության և փորձագետ աշխատակցի միջև կնքված աշխատանքային պայմանագրի պատճենը՝ «Իսկական հետ ճիշտ է» նշումով՝ հաստատված ապահովագրական ընկերության գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությամբ և կնիքով,

3) տեղեկանք՝ որակավորված փորձագետի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ (համաձայն ձև 6-ի): Ընդ որում տեղեկանքում նշված փոխկապակցված անձանց վերաբերյալ յուրաքանչյուր փոփոխության դեպքում փորձագետը պարտավոր է Բյուրո ներկայացնել նոր տեղեկանք՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո՝ 10-օրյա ժամկետում,

4) սույն կանոնների 47-րդ կետի 10-րդ ենթակետով նախատեսված ապահովագրության պայմանագրի պատճենը՝ «Իսկականի հետ ճիշտ է» նշումով՝ հաստատված ապահովագրական ընկերության գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությամբ և, առկայության դեպքում, կնիքով,

5) Ֆիզիկական անձ փորձագետի հետ կնքվող պայմանագրի գրանցումն իրականացնելու համար սույն կանոնների 63.1-րդ կետով սահմանված վճարի իրականացումը հավաստող փաստաթղթի պատճենը:

63.1. Ֆիզիկական անձ փորձագետի հետ կնքվող պայմանագրի գրանցման համար գանձվում է գրանցման վճար 10.000 ՀՀ դրամի չափով:

64. Կոմիտեն ապահովագրական ընկերության և փորձագետի միջև կնքված պայմանագրի գրանցման կամ դրա մերժման մասին որոշումն ընդունում է սույն կանոններով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում: Գործադիր տնօրենը Կոմիտեի՝ սույն կետով նախատեսված դրական որոշման հիման վրա փորձագետի հետ կնքված պայմանագրի գրանցումն իրականացնում է պայմանագրի գործողության ժամկետով, սակայն ոչ ավել, քան փորձագետի որակավորման ժամկետի ավարտն է:

65. Կոմիտեն որոշում է կայացնում փորձագետի հետ կնքված պայմանագրի գրանցումը մերժելու մասին, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը և տեղեկությունները թերի են կամ ոչ արժանահավատ,

2) որակավորված փորձագետի հետ ապահովագրական ընկերության կնքած աշխատանքային պայմանագիրը չի համապատասխանում սույն կանոններով նախատեսված պահանջներին,

3) փորձագետի որակավորման ժամկետն ավարտվել է կամ վերջինս զրկվել է որակավորումից կամ նրա որակավորումը ժամանակավորապես կասեցված է,

4) Կոմիտեի կողմից որոշում կայացնելու պահին Բյուրոյում առկա է տվյալ փորձագետի և տվյալ ապահովագրական ընկերության միջև կնքված և գործող գրանցված պայմանագիր, որի հիման վրա փորձագետն իրավունք ունի իրականացնելու ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննություն:

66. Ապահովագրական ընկերությունը պարտավոր է փորձագետի հետ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելուց կամ փոփոխելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, այդ մասին հայտնել Բյուրոյին՝ նշելով նաև փորձագետի հետ աշխատանքային պայմանագրի դադարեցման հիմքը:

67. Գործադիր տնօրենը Կոմիտեի որոշման հիման վրա գրանցումից հանում է փորձագետի հետ կնքված պայմանագիրը, եթե՝

1) գրանցումից հետո փորձագետի և ապահովագրական ընկերության միջև կնքված պայմանագրի դրույթները փոփոխվել են, և այդ փոփոխության արդյունքում պայմանագիրը այլևս չի համապատասխանում սույն կանոնների պահանջներին,

2) գրանցումից հետո պարզվել է, որ գրանցման ժամանակ Բյուրո են ներկայացվել կեղծ կամ անարժանահավատ փաստաթղթեր կամ տեղեկություններ,

3) գրանցումից հետո փորձագետը զրկվել է փորձագետի որակավորումից կամ ուժը կորցրել է նրա որակավորումը,

4) փորձագետի և ապահովագրական ընկերության միջև կնքված պայմանագիրը լուծվել է:

ԲԱԺԻՆ 6

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ԳԼՈՒԽ 13

ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

68. ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարների հետևանքով առաջացած գույքային վնասների վերականգնում կարող են իրականացնել միայն սույն կանոններով սահմանված պահանջներին բավարարող և Հայաստանի Հանրապետությունում գրանցված անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք:

69. Վերանորոգող կազմակերպությունների հետ ապահովագրական ընկերությունների կողմից կնքված պայմանագրերը պետք է ապահովեն ավտոտրանսպորտային միջոցների վերանորոգման առնվազն հետևյալ ուղղությունները՝

1) ավտոտրանսպորտային միջոցի կմախքի վերանորոգում,

2) շարժիչի վերանորոգում,

3) փոխանցման տուփի վերանորոգում,

4) ընթացամասերի վերանորոգում,

5) ավտոէլեկտրականության վերանորոգում:

70. Ավտոտրանսպորտային միջոցի կմախքի վերանորոգում իրականացնող կազմակեպություններին Բյուրոյի կողմից ներկայացվող տեխնիկական հագեցվածության պահանջներն են՝

1) շուրջօրյա և անվտանգ ավտոկայանատեղի առկայություն՝ համապատասխան պահակային ծառայությամբ,

2) հատուկ առանձնացված տարածքի առկայություն՝ նախատեսված ավտոտրանսպորտային միջոցները ներկելու, քանդելու և հավաքելու համար,

3) պահեստային տարածքի առկայություն՝ նախատեսված ավտոտրանսպորտային միջոցներից ժամանակավոր հանված դետալները, հանգույցները և ագրեգատներն ապահով պահպանելու համար.

4) սարքավորման (ստենդի) առկայություն, որը համալրված է հիդրավլիկ և (կամ) մեխանիկական կերպով ավտոտրանսպորտային միջոցների կմախքը ձգելու համար հարմարանքով,

5) ներկման և չորացման խցիկի առկայություն,

6) հեռախոսակապի առկայություն:

70.1. Ավտոտրանսպորտային միջոցի կմախքի վերանորոգում իրականացնող վերանորոգող կազմակերպությունը սույն կանոնների 70-րդ կետում նշված տեխնիկական հագեցվածության նվազագույն պահանջները միաժամանակ պետք է ապահովի իր գործունեության յուրաքանչյուր վայրում, որտեղ իրականացնելու է սույն կանոններով նախատեսված վերանորոգման աշխատանքները:

71. Սույն կանոնների 69-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված ուղղություններով վերանորոգում իրականացնող կազմակերպությունների համար տեխնիկական հագեցվածության նվազագույն պահանջներ չեն սահմանվում:

72. Բյուրոն ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի հետևանքով վնասված ավտոտրանսպորտային միջոցներից բացի այլ վնասված գույքի վերանորոգում իրականացնող կազմակեպությունների նկատմամբ սահմանում է միայն համապատասխան մասնագիտացում ունենալու պահանջ, իսկ եթե տվյալ գույքի վերանորոգումը լիցենզավորվող (արտոնագրվող) գործունեություն է, ապա համապատասխան լիցենզիայի (արտոնագրի) առկայություն:

ԳԼՈՒԽ 14

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

73. Վերանորոգող կազմակերպությունների հետ ապահովագրական ընկերությունների և Բյուրոյի կողմից կնքվող պայմանագրերն առնվազն պետք է պարունակեն՝

1) պայմանագրի գործողության ժամկետը և պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու հիմքերն ու կարգը,

2) պատվերներ տալու ձևը և այն վերանորոգող կազմակերպությանը փոխանցելու եղանակը,

3) վերանորոգման ուղղությունները,

4) վերանորոգող կազմակերպության պարտավորությունը՝ ապահովել ապահովագրական ընկերության կամ Բյուրոյի աշխատակիցների կողմից ցանկացած պահի իր մոտ ուսումնասիրություններ կատարելու հնարավորությունը՝ Բյուրոյի կողմից սահմանված տեխնիկական հագեցվածության չափանիշների բավարարման սկզբնական և ընթացիկ վիճակը ճշտելու նպատակով,

5) վերանորոգող կազմակերպության անվերապահ համաձայնությունը ապահովել տվյալ ապահովագրական ընկերության և Բյուրոյի ներկայացուցիչներին պայմանագրի շրջանակներում վերանորոգման աշխատանքների հետ կապված ցանկացած պահի իր մոտ կատարելու ուսումնասիրություններ, Բյուրոյի ստուգիչ փորձաքննություններ, ստանալու դրանց հետ կապված բացատրություններ և հիմնավորումներ, ինչպես նաև վերանորոգող կազմակերպության պարտավորությունը ցանկացած պահի վերջիներիս տրամադրելու վերանորոգման գործընթացին վերաբերող փաստաթղթեր և հիմնավորումներ,

6) վերանորոգող կազմակերպության պարտավորությունը իր կողմից կատարված վերանորոգումների գծով Բյուրոյի կամ ապահովագրական ընկերության կողմից նշանակված ստուգիչ փորձաքննությունների գործընթացներում, դրա հետ կապված վարչական և դատական վարույթներում ցանկացած շահագրգիռ անձի համապատասխան պահանջի առկայությամբ մասնակցելու և հիմնավորելու իր կողմից կատարված վերանորոգման անհրաժեշտության և դրա ծախսերի հիմնավորման վերաբերյալ,

7) վերանորոգող կազմակերպության պարտավորությունը վերանորոգվող ավտոտրանսպորտային միջոցն իրեն հանձնելու պահից մինչև վերանորոգված վիճակում դրա սեփականատիրոջը հանձնելու պահը առաջացած վնասները և կորուստները տուժողին հատուցելու համար,

8) վերանորոգող կազմակերպության կողմից կատարված աշխատանքների որակի պատասխանատվության համար առնվազն մեկ տարվա, իսկ փոփոխված պահեստամասերի (դետալների և ագրեգատների) մասով՝ դրանց համար նախատեսված համապատասխան վազքի երաշխիք ապահովելու վերանորոգող կազմակերպության պարտավորությունը,

9) վերանորոգող կազմակերպության վարձատրության սկզբունքներն ու վճարման ժամկետները՝ յուրաքանչյուր պատվերի դեպքում,

10) վերանորոգման աշխատանքների կատարման ժամկետը կամ յուրաքանչյուր պատվերի դեպքում աշխատանքի կատարման ժամկետի որոշման կարգը,

11) վերանորոգող կազմակերպության պարտավորությունը վերանորոգում իրականացնելու հետ կապված իր հաշվետվությունները տրամադրել համաձայն սույն կանոններով սահմանված Զև 1-ի, իսկ սույն կանոնների 21-րդ կետով նախատեսված դեպքերում՝ համաձայն սույն կանոնների 7-րդ գլխով սահմանված նվազագույն պահանջների,

12) պայմանագրով նախատեսված ժամկետներում պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պայմանագրի կողմերի համար կիրառվող տուգանքները և տույժերը,

13) վերանորոգող կազմակերպության պարտավորությունը՝ պատշաճ կերպով իր մոտ պահելու և նույն վիճակում ապահովագրական ընկերությանը հետ վերադարձնելու փոփոխման ենթակա կամ փոփոխված պահեստամասերը, դետալներն ու ագրեգատները,

14) վերանորոգող կազմակերպության անվերապահ պարտավորությունը՝ վերանորոգման գործընթացում առաջնորդվել Բյուրոյի կողմից սույն կանոններով և այլ կանոններով սահմանված պահանջներով:

15) ապահովագրական ընկերության պարտավորությունը ԱՊՊԱ ոլորտում գույքային վնասների գնահատման և վերանորոգման գործընթացների հետ կապված Բյուրոյի կողմից սահմանված պահանջների և դրանց յուրաքանչյուր փոփոխության մասին գրավոր տեղեկացնել վերանորոգող կազմակերպությանը՝ այդ պահանջները կամ դրանց փոփոխությունները ուժի մեջ մտնելուց առնվազն 1 աշխատանքային օր առաջ,

16) նշում այն մասին, որ վերանորոգող կազմակերպությունը ծանոթ է Բյուրոյի կողմից վերանորոգող կազմակերպությունների հետ կնքվող պայմանագրերի գրանցման և գրանցումից հանելու հիմքերին, կարգին և հետևանքներին (միայն ավտոտրանսպորտային միջոցների վերանորոգում իրականացնող կազմակերպությունների հետ կնքվող պայմանագրերում),

17) վերանորոգող կազմակերպության պարտավորությունը՝ իր կողմից ապահովագրական ընկերությանը (Բյուրոյին) մատուցված ծառայությունների շրջանակներում հատուցելու իր մասնագիտական սխալի կամ անփութության, ինչպես նաև դիտավորյալ գործողությունների հետևանքով ապահովադրին, ապահովագրված անձին, տուժողին, նրա իրավահաջորդին, ապահովագրական ընկերությանը և (կամ) Բյուրոյին պատճառված վնասները,

18) վերանորոգող կազմակերպության պարտավորությունը՝ առանց ապահովագրական ընկերության (Բյուրոյի) ներկայացուցչի չիրականացնել վերանորոգման հետ կապված խնդիրների քննարկումներ, ճշտումներ և ցանկացած պարզաբանումներ տուժողի, նրա ներկայացուցչի կամ իրավահաջորդի, ապահովադրի կամ ապահովագրված անձի հետ:

ԳԼՈՒԽ 15

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

74. Վերանորոգում իրականացնող կազմակերպությունների գրանցման գործընթացը ներառում է վերանորոգող կազմակերպությունների նկատմամբ սահմանված պահանջների համապատասխանության ստուգում (նման պահանջներ սահմանված լինելու դեպքում) և դրանց հետ ապահովագրական ընկերությունների կամ Բյուրոյի կողմից կնքված պայմանագրերի համապատասխանության ստուգում:

75. Եթե վերանորոգող կազմակերպությունը որևէ ապահովագրական ընկերության կամ Բյուրոյի հետ կնքված պայմանագրի գրանցման ընթացքում անցել է համապատասխան պահանջների ստուգում, ապա մեկ այլ ապահովագրական ընկերության (Բյուրոյի) հետ կնքված պայմանագրի գրանցման ժամանակ Կոմիտեի կողմից ստուգվում է միայն պայմանագրի համապատասխանությունը:

76. Վերանորոգող կազմակերպությունների նկատմամբ սահմանված պահանջների համապատասխանությունն ստուգելու նպատակով Կոմիտեի կողմից ստեղծվում է աշխատանքային խումբ, որի անդամների առնվազն կեսը պետք է լինեն Կոմիտեի անդամներ, իսկ մյուս անդամները պետք է լինեն Բյուրոյի այլ աշխատակիցներ: Առանձին դեպքերում Կոմիտեի որոշմամբ վերանորոգող կազմակերպությունների նկատմամբ սահմանված պահանջների համապատասխանության ստուգման գործառույթը կարող է պատվիրակվել Բյուրոյի հետ համագործակցող փորձագետներին: Աշխատանքային խումբը վերանորոգող կազմակերպության ստուգման (այդ թվում պատվիրակված

փորձագետի կողմից իրականացված) արդյունքներով տալիս է եզրակացություն՝ Բյուրոյի կանոններով սահմանված պահանջներին տվյալ վերանորոգող կազմակերպության համապատասխանության վերաբերյալ:

77. Վերանորոգող կազմակերպության հետ կնքված պայմանագրի գրանցումն իրակա-նացնելու համար ապահովագրական ընկերությունը Բյուրո է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) ապահովագրական ընկերության միջնորդագիր՝ վերանորոգող կազմակերպությանը գրանցելու համար (համաձայն ձև 7-ի),

2) ապահովագրական ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կողմից ստորագրված և կնքված տեղեկանք՝ առ այն, որ վերանորոգում իրականացնող կազմակերպությունը համապատասխանում է Բյուրոյի կողմից սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջներին (նման պահանջներ սահմանված լինելու դեպքում),

3) ապահովագրական ընկերության և վերանորոգող կազմակերպության միջև կնքված պայմանագրի պատճենը՝ «Իսկականի հետ ճիշտ է» նշումով՝ հաստատված ապահովագրական ընկերության իրավասու անձի ստորագրությամբ և կնիքով,

4) փաստաթուղթ, որով հավաստվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ապահովագրական ընկերությանը տրված թույլտվությունը՝ համապատասխան գործառույթը տվյալ կազմակերպությանը պատվիրակելու վերաբերյալ (օրենսդրությամբ նման թույլտվություն ստանալու պահանջի առկայության դեպքում),

5) վերանորոգող կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի և գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված և հաստատված տեղեկանք՝ վերանորոգման հետ կապված գործառույթներն իրականացնելու տարածքի (տարածքների) մասին, որին պետք է կցվեն դրանք տվյալ կազմակերպությանը անհատույց օգտագործման կամ վարձակալության իրավունքով տրամադրված լինելու կամ սեփականության իրավունքով նրան պատկանելու փաստը հավաստող փաստաթղթերը,

6) փաստաթուղթ առ այն, որ Բյուրոյի կողմից սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջներին բավարարող տեխնիկական միջոցը (միջոցները) արտացոլված է վերանորոգող կազմակերպության հաշվեկշռում կամ վերանորոգող կազմակերպությանը տրամադրված է անհատույց օգտագործման կամ վարձակալության իրավունքով:

78. Կոմիտեն վերանորոգող կազմակերպության հետ կնքված պայմանագրի գրանցման կամ գրանցումը մերժելու մասին որոշումն ընդունում է սույն կանոններով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում: Կոմիտեի դրական որոշման հիման վրա Գործադիր տնօրենը գրանցում է վերանորոգող կազմակերպության հետ կնքված պայմանագիրը:

79. Կոմիտեն որոշում է կայացնում վերանորոգող կազմակերպության հետ կնքված պայմանագրի գրանցումը մերժելու մասին, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը և տեղեկությունները թերի են կամ ոչ արժանահավատ,

2) համաձայն կոմիտեի կողմից ստեղծված աշխատանքային խմբի եզրակացության (համաձայն ձև 8-ի)՝ վերանորոգող կազմակերպությունը չի բավարարում սույն կանոններով սահմանված պահանջներին,

3) վերանորոգող կազմակերպության հետ կնքված պայմանագիրը չի համապատասխանում սույն կանոններով նախատեսված պահանջներին,

4) միջնորդագիրը ներկայացնելուն նախորդող 3 տարվա ընթացքում վերանորոգող կազմակերպության և ապահովագրական ընկերության (Բյուրոյի) միջև կնքված պայմանագրերը Բյուրոյի կողմից հանվել են գրանցումից սույն կանոնների 12-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկով: ***(79-րդ կետի 4-րդ ենթակետը փոփոխվել է 23/06/2015թ թիվ 68-Լ որոշմամբ)***

80. Գործադիր տնօրենը Կոմիտեի որոշման հիման վրա գրանցումից հանում է վերանորոգող կազմակերպության հետ կնքված պայմանագիրը սույն կանոնների 12-րդ կետում նախատեսված դեպքերում, ինչպես նաև եթե՝

1) գրանցումից հետո վերանորոգող կազմակերպության և ապահովագրական ընկերության միջև կնքված պայմանագրի դրույթները փոփոխվել են, և այդ փոփոխության արդյունքում պայմանագիրը այլևս չի համապատասխանում սույն կանոնների պահանջներին,

2) գրանցումից հետո պարզվել է, որ գրանցման ժամանակ Բյուրո են ներկայացվել կեղծ կամ անարժանահավատ փաստաթղթեր կամ տեղեկություններ,

3) պարզվել է, որ ավտոտրանսպորտային միջոցի կմախքի վերանորոգում իրականացնող կազմակերպությունն այլևս չի համապատասխանում Բյուրոյի կողմից սույն կանոններով սահմանված տեխնիկական հագեցվածության չափանիշներին,

4) վերանորոգող կազմակերպության և ապահովագրական ընկերության միջև կնքված պայմանագիրը լուծվել է:

81. Ապահովագրական ընկերությունը պարտավոր է վերանորոգող կազմակերպության հետ կնքված պայմանագիրը դադարեցնելուց կամ փոփոխելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, այդ մասին հայտնել Բյուրոյին՝ նշելով նաև վերանորոգող կազմակերպության հետ կնքված պայմանագրի դադարեցման հիմքը:

82. Բյուրոն իր ինտերնետային կայքի համապատասխան մասում հրապարակում է Գործադիր տնօրենի կողմից գրանցված վերանորոգող կազմակերպությունների ցանկը, որտեղ նշվում են նրանց անվանումները (անուն, ազգանունը), գործունեության հասցեները, ապահովագրական ընկերությունների անվանումները, որոնց հետ տվյալ վերանորոգող կազմակերպությունը ունի կնքված պայմանագրեր: Ապահովագրական ընկերությունները պարտավոր են իրենց ինտերնետային կայքերում, ինչպես նաև իրենց գործունեության վայրում՝ տեսանելի տեղերում հրապարակել ԱՊՊԱ ոլորտում այն վերանորոգող կազմակերպությունների ցանկը, որոնց հետ նրանք ունեն սույն կանոնների պահանջներին համապատասխան Բյուրոյում գրանցված պայմանագրեր:

ԲԱԺԻՆ 7

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 16

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

83. Սույն կանոններով որակավորման, գրանցման կամ ցանկացած այլ հարցի վերաբերյալ Որակավորման հանձնաժողովի, Խորհրդի կամ Կոմիտեի կողմից բացասական որոշում կայացվելու կամ որակավորումից զրկելու (գրանցումից հանելու)

դեպքում դիմում (միջնորդագիր) ներկայացրած անձը (համապատասխան հասցեատերը) պատվիրված նամակով կամ առձեռն հանձնելու միջոցով տեղեկացվում է տվյալ որոշման վերաբերյալ՝ այդ որոշումն ընդունվելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետով նախատեսված որոշումն ուժի մեջ է մտնում համապատասխան հասցեատիրոջը սույն կետով սահմանված կարգով ծանուցելուն հաջորդող օրը:

84. Սույն կանոններով որակավորման, գրանցման կամ ցանկացած այլ հարցի վերաբերյալ Որակավորման հանձնաժողովի, Խորհրդի կամ Կոմիտեի կողմից որոշում ընդունելու համար սահմանված ժամկետները տվյալ մարմնի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով կարող են կասեցվել նրա կողմից, բայց ոչ ավելի, քան մեկ ամսով:

85. Սույն կանոններով որակավորման, գրանցման կամ ցանկացած այլ հարցի վերաբերյալ Որակավորման հանձնաժողովի, Խորհրդի կամ Կոմիտեի կողմից որոշում ընդունելու համար սահմանված ժամկետում այդ մարմինների կողմից դիմում ներկայացրած անձի դիմումը չմերժելու և սահմանված ժամկետը սույն կանոնների 84-րդ կետով սահմանված կարգով կասեցնելու մասին որոշում չկայացնելու դեպքում համարվում է, որ Բյուրոն ընդունել է դրական որոշում, և Բյուրոն (նրա համապատասխան մարմինը) պարտավոր է իրականացնել այն գործողությունները, որոնք, համաձայն սույն կանոնների, նա պետք է իրականացներ, եթե սահմանված ժամկետում ընդունած լիներ համապատասխան դրական որոշումը: Ընդ որում, այդ գործողությունների համար սահմանված ժամկետների հաշվարկն սկսվում է Բյուրոյի կողմից համապատասխան որոշումը կայացնելու համար նախատեսված ժամկետի վերջին օրը լրանալու պահից:

ԳԼՈՒԽ 17

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

86. Սույն կանոնների 19-րդ կետով սահմանված պահանջն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ին:

87. Այն դեպքում, երբ սույն կանոնների 86-րդ կետի պահանջն ապահովագրական ընկերության կողմից խախտվում է Բյուրոյի կողմից համապատասխան քանակի որակավորված փորձագետների բացակայության պատճառով, դա չի որակվում որպես խախտում:

88. Մինչև 2015 թվականի հուլիսի 1-ը Բյուրոյի կողմից տրված որակավորման գործողությունը սահմանվում է մինչև 2015 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ, միևնույն ժամանակ մինչև 2015 թվականի հուլիսի 1-ը Բյուրոյի կողմից որակավորում ստացած փորձագետների նկատմամբ չի կիրառվում սույն կանոնների 47-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանված պահանջը:

89. Ապահովագրական ընկերությունները մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը պետք է Բյուրո ներկայացնեն այն փորձագետների հետ կնքված սույն կանոնների համապատասխանաբար 25-րդ կետի 6-րդ ենթակետով և 47-րդ կետի 10-րդ ենթակետով նախատեսված ապահովագրության պայմանագրերի պատճենները՝ «Իսկականի հետ ճիշտ է» նշումով՝ հաստատված ապահովագրական ընկերության գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությամբ և, առկայության դեպքում, կնիքով, որոնց հետ իրենց կնքած պայմանագրերը տվյալ օրվա դրությամբ գրանցված են Բյուրոյի կողմից:

Ձև 1

«ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատման և փորձաքննության կարգի ու մեթոդաբանության, փորձագետների որակավորման կարգի, չափանիշների ու պայմանների և որակավորումից զրկման կարգի ու հիմքերի» կանոնների

ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎՆԱՍՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ

	Փոխվող դետալների (ագրեգատների) անվանումը	Գործարանային, ոչ գործարանա-յին, օգտագործված	քանակ (հատ)	Միավոր արժեք (ՀՀ դրամ)	Ընդհանուր արժեք (ՀՀ դրամ)
1.					
2.					
3.					
…					
Ընդամենը դրամ					***(----------) ՀՀ***
	Վերանորոգվող դետալների (ագրեգատների) անվանումը		քանակ(հատ)	Միավոր արժեք (ՀՀ դրամ)	Ընդհանուր արժեք (ՀՀ դրամ)
1.					
2.					
3.					
…					
Ընդամենը դրամ					***(----------) ՀՀ***
	Օգտագործվող նյութերի անվանումը		քանակ(չափման միավոր)	Միավոր արժեք (ՀՀ դրամ)	Ընդհանուր արժեք (ՀՀ դրամ)
1.					
2.					
3.					
…	…				

Ընդամենը դրամ		***(----------) ՀՀ***
	Հավանական լրացուցիչ այլ ծախսեր	***(----------) ՀՀ դրամ***
1.		
	Վերանորոգման աշխատանքների արժեք	***(----------) ՀՀ դրամ***
Ընդամենը՝(վերանորոգման ընդհանուր ծախսերը)		***(----------) ՀՀ դրամ***

Վերանորոգող կազմակերպության ղեկավար՝

_____

անուն, ազգանուն, ստորագրություն,

Կ.Տ.

Ձև 2

«ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատման և փորձաքննության կարգի ու մեթոդաբանության, փորձագետների որակավորման կարգի, չափանիշների ու պայմանների և որակավորումից զրկման կարգի ու հիմքերի» կանոնների

(Ձև 2-ը փոփոխվել է 31/08/2015թ թիվ 80-Լ)

ԱՊՀ ԵՎ ՆԱԽԿԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻՑ ԲԱՑԻ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԱՐՏԱԴՐՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԱՇՎԱԾՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍՆԵՐԸ՝ ԸՍՏ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՏԱՐԻՔԻ ԵՎ ՎԱՃՔԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ

Վազքը (Հազ.կմ)	**Ավտոտրանսպորտային միջոցի տարիքը (տարի)**					
	0-ից 2	**3-ից 4**	**5-ից 6**	**7-ից 8**	**9-ից 10**	**11 և ավելի**
0-40	Չի կիրառվում			17	21	24
40-80				20	23	27
80-120				24	28	30
120-140	18	22	24	27	29	31
140-160	20	23	26	28	29	32
160-180	22	26	27	30	31	33
180-200	24	27	29	31	32	33
200-250	25	28	30	32	33	35
250-350	32	33	36	38	38	40
350-ից ավելի	40	42	44	46	46	47

Ձև 3

«ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատման և փորձաքննության կարգի ու մեթոդաբանության, փորձագետների որակավորման կարգի, չափանիշների ու պայմանների և որակավորումից զրկման կարգի ու հիմքերի» կանոնների

(Ձև 3-ը փոփոխվել է 31/08/2015թ թիվ 80-Լ)

ԱՊՀ ԵՎ ՆԱԽԿԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԱՐՏԱԴՐՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԱՇՎԱԾՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍՆԵՐԸ՝ ԸՍՏ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՏԱՐԻՔԻ ԵՎ ՎԱՃՔԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ

Վազքը (Հազ.կմ)	Ավտոտրանսպորտային միջոցի տարիքը(տարի)				
	0-ից 3	4-ից 10	11-ից 15	16-ից 20	21 և ավելի
0-60	Չի կիրառվում	6	11	13	16
60-100	5	8	12	14	20
100-150	6	9	13	15	23
150-200	9	11	13	16	25
200-300	10	12	14	17	27
300-ից ավելի	12	13	15	18	30

Ձև 4

«ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատման և փորձաքննության կարգի ու մեթոդաբանության, փորձագետների որակավորման կարգի, չափանիշների ու պայմանների և որակավորումից զրկման կարգի ու հիմքերի» կանոնների

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ
Գործադիր տնօրեն _____ -ին

Դ Ի Մ Ո Ւ Մ

ԱՊՊԱ ոլորտի գույքային վնասների գնահատման որակավորում ստանալու

Հարգելի _____,

Համաձայն «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 26/11/2010թ թիվ 26-Լ որոշմամբ հաստատված կանոնների կից ներկայացնում ենք ԱՊՊԱ ոլորտում

☐ անշարժ գույքին պատճառված վնասների

☐ անշարժ գույքից բացի ցանկացած այլ գույքին պատճառված վնասների

գնահատման որակավորում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները:

Հավաստիացնում եմ (ենք), որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում եմ (ենք), որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է դիմումի մերժմանը: Սույն դիմումով տալիս եմ (ենք) համաձայնություն «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ին՝ ներկայացված փաստաթղթերը և տեղեկությունները ճշտելու նպատակով կատարել համապատասխան ստուգումներ և ուսումնասիրություններ, ինչպես նաև կատարել հարցումներ և ստանալ դրանց պատասխանները: Ներկայացված փաստաթղթերում և (կամ) տեղեկություններում ցանկացած փոփոխության դեպքում պարտավորվում եմ (ենք) 10-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել Բյուրոյին:

Առդիր՝ _____ էջ:

Դիմող՝ _____

Անուն, ազգանուն (Ընկերության անվանումը, իրավասու անձի անունը, ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ

_____

բնակության (գործունեության) հասցե, հեռախոսահամար

«___» _____20 թ.

Ձև 5

«ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատման և փորձաքննության կարգի ու մեթոդաբանության, փորձագետների որակավորման կարգի, չափանիշների ու պայմանների և որակավորումից զրկման կարգի ու հիմքերի» կանոնների

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ
Գործադիր տնօրեն _____ -ին

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ր

ԱՊՊԱ ոլորտի փորձագետի հետ կնքված պայմանագրի գրանցման

Հարգելի _____,

Համաձայն Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 26/11/2010թ թիվ 26-Լ որոշմամբ հաստատված կանոնների խնդրում ենք գրանցել _____-ի՝

Փորձագիտական կազմակերպության անվանումը (որակավորված փորձագետի անուն ազգանունը, անձնագրային տվյալները)

որպես ԱՊՊԱ ոլորտի

☐ անշարժ գույքին պատճառված վնասներ գնահատելու փորձագետ

☐ անշարժ գույքից բացի ցանկացած այլ գույքին պատճառված վնասներ գնահատելու փորձագետի հետ կնքված պայմանագիրը:

Առդիր՝ _____ էջ:

Ապահովագրական ընկերության իրավասու անձ՝

_____

Ընկերության անվանումը, իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը

Կ. Տ

«___» _____20 թ.

Ձև 6

«ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատման և փորձաքննության կարգի ու մեթոդաբանության, փորձագետների որակավորման կարգի, չափանիշների ու պայմանների և որակավորումից զրկման կարգի ու հիմքերի» կանոնների

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՐՁԱԳԵՏԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փոխկապակցված ֆիզիկական անձանց ցանկ

	Անուն, ազգանուն	*Անձնագրի սերիա և համար*	*Բնակության վայր*	*Փոխկապակցվածության ձև*	*Աշխատանքի վայր*	*Պաշտոն*	*Հեռախոսահամար*
1.							
2.							
…							

Փոխկապակցված իրավաբանական անձանց ցանկ

	Կազմակերպության անվանում	*Գտնվելու վայր*	*Փոխկապակցվածության ձև*	*Հեռախոսահամար*
1.				
2.				
…				

Սույն տեղեկանքում իմ կողմից հայտարարված փոխկապակցված անձանց վերաբերյալ ցանկացած փոփոխության դեպքում պարտավորվում եմ Ապահովագրական ընկերություն և Բյուրո ներկայացնել նոր տեղեկանք՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

անուն, ազգանուն (անվանում) _____ _____

ստորագրություն ամսաթիվ

Ձև 7

«ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատման և փորձաքննության կարգի ու մեթոդաբանության, փորձագետների որակավորման կարգի, չափանիշների ու պայմանների և որակավորումից զրկման կարգի ու հիմքերի» կանոնների

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ
Գործադիր տնօրեն _____ -ին

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ր

Վերանորոգող կազմակերպության հետ կնքված պայմանագրի գրանցման

Հարգելի _____,

Համաձայն Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 26/11/2010թ թիվ 26-Լ որոշմամբ հաստատված կանոնների խնդրում ենք գրանցել _____-ի՝

Վերանորոգող կազմակերպության անվանումը

որպես ԱՊՊԱ ոլորտում վնասված գույքի վերանորոգում իրականացնող կազմակերպության հետ կնքված պայմանագիրը:

Առդիր՝ _____ էջ:

Ապահովագրական ընկերության իրավասու անձ՝

_____

Ընկերության անվանումը, իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը

Կ. Տ

«___» _____20 թ.

Ձև 8

«ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատման և փորձաքննության կարգի ու մեթոդաբանության, փորձագետների որակավորման կարգի, չափանիշների ու պայմանների և որակավորումից զրկման կարգի ու հիմքերի» կանոնների

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԿՄԱԽՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վերանորոգողկազմ.անվանումը՝

_____,

Հասցեն և հեռախոսահամարը՝

_____

Հ/h	*Տեխնիկական հագեցվածություն*	*Բավարարման մասին նշում*	*Այլ նշումներ*
1.	շուրջօրյա և անվտանգ ավտոկայանատեղի՝ համապատասխան պահակային ծառայությամբ	☐ *Բավարարում է* ☐ *Բավարարում է մասամբ* - *Չի բավարարում*	
2.	հատուկ առանձնացված տարածք, որտեղ ներկելու համար կքանդվեն և կհավաքվեն ավտոտրանսպորտային միջոցները	☐ *Բավարարում է* ☐ *Բավարարում է մասամբ* - *Չի բավարարում*	
3.	պահեստային տարածք, որտեղ ապահով կպահպանվեն մեքենայից ժամանակավոր հանված դետալները և ագրեգատները	☐ *Բավարարում է* ☐ *Բավարարում է մասամբ* - *Չի բավարարում*	
4.	սարքավորում (ստենդ), որը համալրված է հիդրավլիկ և (կամ) մեխանիկական կերպով մեքենայի կմախքը ձգելու համար հարմարանքով	☐ *Բավարարում է* ☐ *Բավարարում է մասամբ* - *Չի բավարարում*	

5.	ներկման և չորացման խցիկ	☐ *Բավարարում է* ☐ *Բավարարում է մասամբ* - *Չի բավարարում*	
6.	հեռախոսակապի առկայություն	☐ *Բավարարում է* ☐ *Բավարարում է մասամբ* - *Չի բավարարում*	

Վերանորոգող կազմակերպության ղեկավարի նշումները _____ :

Վերանորոգող կազմ. ղեկավար _____

անունը, ազգանունը, ստորագրությունը

Կ. Տ.

Ստուգող կազմակերպության ղեկավար՝* _____ _____

զբաղեցրած պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը

«ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՆՔ»*

Աշխատանքային խմբի ղեկավար՝ _____ _____

զբաղեցրած պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը

Աշխատանքային խմբի անդամ՝ _____ _____ _____

զբաղեցրած պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը

«___» _____, 20___թ.

***Սույն տողերը լրացվում են Բյուրոյի կողմից վերանորոգող կազմակերպության տեխնիկական հագեցվածության նկատմամբ սահմանված պահանջների համապատասխանության տեղում ստուգման իրականացումը իր հետ համագործակցող փորձագետի պատվիրակվելու դեպքում:**

Ձև 9

«ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատման և փորձաքննության կարգի ու մեթոդաբանության, փորձագետների որակավորման կարգի, չափանիշների ու պայմանների և որակավորումից զրկման կարգի ու հիմքերի» կանոնների

ՎՆԱՍՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԱԿՏ

Զննության համար փորձագետի (փորձագետներից ամենաառաջինի) կողմից համապատասխան հանձնարակականը (պատվերը) ստանալու օրը և ժամը՝ ___/_____/20___թ, ժամը՝___:
օօ ամ տտ

Զննության օրը և ժամը՝ ___/_____/20___թ, ժամը՝___:
օօ ամ տտ

Զննության ակտը կազմելու օրը և ժամը ___/_____/20___թ, ժամը՝___:
օօ ամ տտ

Զննության վայրը՝ _____
(մարզի և քաղաքի (գյուղի) անվանումը, փողոցի անվանումը, մուտակա կողմնորոշիչի անվանումը)

1. ՎՆԱՍՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մակնիշը	Հաշվառման համարանիշը	Հաշվառման վկայականի համարը	Արտադրության տարեթիվը	Վազքը (կմ)	Նույնացման համարը
…	…	…	…	…	…

2. ՎՆԱՍՎԱԾ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

… _____

_____

3. ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԵՏԱԼՆԵՐԸ (ԱԳՐԵԳԱՏՆԵՐ)

Հ/հ	Դետալների (ագրեգատների) անվանումը	Քանակ (հատ)	Տարիք (տարի)	Մինչև պատահարի տեղի ունենալը Տ/Մ-ի դետալների (ագրեգատների) վերաբերյալ տեղեկատվություն			Այլ նշումներ
				գործարանային	ոչ գործարանային	վերանորոգված	
1.	…			☐	☐	☐	
…	…						

4. ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԵՏԱԼՆԵՐԸ (ԱԳՐԵԳԱՏՆԵՐԸ) ԵՎ ԴՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հ/h	վնասված դետալների (ագրեգատների) անվանումը	վնասված դետալի (ագրեգատի) բնութագիրը			
		դեֆորմացված	քերծված	կոտրված	այլ նշումներ
1.		☐	☐	☐	
…					

5. **ՎՆԱՍՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԸ**

Հ/h	աշխատանքի անվանումը	օգտագործվող նյութերի անվանում	օգտագործվող նյութերի քանակ (հատ)	այլ նշումներ
1.	…			
…	…			

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Պատահարի մասնակիցների և ապահովագրական ընկերությունների ստորագրություններ	**Փորձագետի (փորձագետների) ստորագրություններ**
_____ _____ պատահարի մասնակցի ԱԱ ստորագրություն _____ _____ պատահարի մասնակցի ԱԱ ստորագրություն _____ _____ ապահովագրական ընկերություն ստորագրություն _____ _____ ապահովագրական ընկերություն ստորագրություն	_____ _____ Փորձագետի ԱԱ ստորագրություն _____ _____ Փորձագետի ԱԱ ստորագրություն

* Սույն ստորագրությամբ հավաստում եմ, որ համաձայն եմ վնասված գույքի մասին առկա նշումներին և գիտակցում եմ, որ հետագայում հատուցում ստանալու համար կազմված փորձաքննության եզրակացությունը հիմնվելու է բացառապես զննության սույն ակտում արտացոլված տվյալների վրա:

☐ **Վնասված գույքի ֆոտոլուսանկարներ (կից թվով _____ ֆոտոլուսանկար):**

Ձև 10

«ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատման և փորձաքննության կարգի ու մեթոդաբանության, փորձագետների որակավորման կարգի, չափանիշների ու պայմանների և որակավորումից զրկման կարգի ու հիմքերի» կանոնների

(Ձև 10 -ը լրացվել է 21/07/2015թ թիվ 77-Լ որոշմամբ)

ՎՆԱՍՎԱԾ ԴԵՏԱԼՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՑԱՆԿ

Ցանկը կազմելու օրը և ժամը ___/_____/20___թ, ժամը՝___:
Ցանկը կազմելու վայրը՝

_____

(մարզի և քաղաքի (գյուղի) անվանումը, փողոցի անվանումը, մուտակա կողմնորոշիչի անվանումը)

1. ՎՆԱՍՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մակնիշը	Հաշվառման համարանիշը	Հաշվառման վկայականի համարը	Արտադրության տարեթիվը	Վազքը (կմ)	Նույնացման համարը
…	…	…	…	…	…

2. ՎՆԱՍՎԱԾ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

…

3. ԱԿՆԱԴԻՏԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՄԲ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հ/h	վնասված դետալների (ագրեգատների) անվանումը	վնասված դետալի (ագրեգատի) բնութագիրը				
		ռեֆորմացված	քերծված	կոտրված	մինչև ՃՏՊ-ն տվյալ դետալի (ագրեգատի) վնասվածքները (առկայության դեպքում)	այլ նշումներ
1.		☐	☐	☐		
…						

4. ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՈՒՄԸ*



Հավաստում եմ, որ տեղյակ եմ (ինձ բացատրվել է, մատնացույց է արվել), թե վերոնշյալ դետալները (ագրեգատները) ավտոտրանսպորտային միջոցի որ մասում են տեղակայված, կոնկրետ որ դետալների (ագրեգատների) մասին է նշում կատարված,

Հավաստում եմ նաև, որ սույն արձանագրությամբ ներկայացված տվյալները ճիշտ են, համապատասխանում են իրականությանը, և գիտակցում եմ, որ կեղծ տեղեկություններ ներկայացնելու դեպքում օրենքով սահմանված կարգով կարող եմ ենթարկվել քրեական պատասխանատվության, իսկ ներկայացված հատուցման դիմումը կարող է մերժվել:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Տուժող կամ վերջինի ներկայացուցիչ		**Զննություն իրականացրած անձ**	
_____ անուն/ազգանուն	_____ ստորագրություն		
Վնաս պատճառող կամ վերջինի ներկայացուցիչ		_____ անուն/ազգանուն	_____ ստորագրություն
_____ անուն/ազգանուն	_____ ստորագրություն		

* վնասվածքները նկարագրվում են գծապատկերի համապատասխան մասում հետևյալ նշագրումների կատարման միջոցով՝

E3 Գրեթե աննշան փոս ընկած կամ քերծված տեղեր
U1 Մատնաչափ փոս ընկած տեղ

U2	Ափի չափ փոս ընկած տեղ
U3	U2-ից ավելի մեծ փոս ընկած տեղ
Y1	Մատնաչափ քերծվածք
Y2	Ափի չափ քերծվածք
Y3	Y2-ից ավելի մեծ քերծվածք
X	Ամբողջովին վնասված մակերես